


Ս. ԿՐԵՎԵՐ


Զ Ի Ո Ի Խ Ն Ա Մ Ք Ը



31 JAN 2018

Ս. ԿՐԵՎԵՐ

Ջ Ի Ո Ի Խ Ն Ա Մ Ք Ը



Պ Ե Տ Ն Ր Ա Տ

1938

Յ Ե Ր Ե Վ, Ա. Ն

Ս. Կեփեք. — «Զիւ խնամքը» զբքույկը պատմում է ձին խնամելու և աշխատանքի մեջ ոգտագործելու հիմնական կանոնների մասին: Գլխավոր ուշադրութիւնը դարձրած է ձին կերակրելու, ջրելու, մաքրելու, թամբելու, ձիասարքի վրա և ձին ախոռում և ձիակապարանում պահպանելու վրա: Բացի դրանից, զբքույկում արվում են գործնական խորհուրդներ ձին դաշտային պայմաններում խնամելու և նրան հիվանդութիւններից պահպանելու վերաբերյալ:

Գրքույկը նախատեսված է հեծելագործի, հրետանու, գնդացրային գորամասերի և գորային գումակի կարմիր բանակայինների և կրասեր հրամանատարների համար:



11-287469

ՁԻՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅԵՐԿԻՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կուսակցութեան XVII համագումարում պաշտպանութեան ժողովրդական կոմիտար ընկեր Վորոշիլովի ասել է.

«Զիւն, նրա պահպանութեան ու վերաբրտագրմանը պետք է կպչել, ինչպես հարկն է: Ամենից առաջ անհրաժեշտ է միանգամ ընդմիշտ վերջ տալ ձին մեքենայով փոխարինելու, «ձիու մահացման» փաստակար «թերփաներին»: Անհրաժեշտ է միանգամ ընդմիշտ վերջ տալ դիմազրկութեանը՝ ձին ոգտագործելու մեջ...

Այնուհետև անհրաժեշտ է սովորել վաղ միայն ձին կերակրել և պահպանել, այլ, ամենից առաջ, ուսցիտնալ կերպով ոգտագործել... Մենք պարտավոր ենք հասկանալու այն պարզ ճշմարտութիւնը, թե ձին մոտոր չէ, այլ կենդանի էակ, վորը կարիք ունի ավելի ևս մեծ ուշադրութեան և խնամքի, քան նույնիսկ մասորը...»

Պաշտպանութեան ժողովրդական կոմիտար ընկեր Վորոշիլովի այդ խոսքերը պարզ ցույց են տալիս, թե ինչ հակայական նշանակութիւն ունի ձին ժողովրդական տնտեսութեան և մեր յերկրի պաշտպանութեան մեջ:

Արժեքավոր լծկան ուժ հանդիտանալով՝ ձին լրացնում է մեխանիկական քարշը և հաջողութեամբ ոգտագործվում է բեռնատրանսպորտի և գյուղատնտեսական աշխատանքների մեջ (ցաքանման, ցանքաի, ձիափողի մեջ և այլն): Մեր յերկրի ձիատնտեսութեան ամրանում և տարեց տարի զարգանում է:

Մեծ է ձիու նշանակութիւնը նաև յերկրի պաշտպանութեան մեջ: Քաղաքացիական կռի տարիներում Առաջին Հեծյալ բանակը ընկերներ Վորոշիլովի և Բուդյոննու ղեկավարութեամբ միշտ վճռական հաղթութիւններ և տարել հակահեղափոխութեան

դեմ վարած ճակատամարտերում: Սպիտակ կազակային հեծելա-
զորի ջախջախումը Վորոնեժի, Կաստորնայի և Մանիչի մոտ, լե-
հական ճակատի ձեղքումը Գրեվի տակ—այդ բոլոր փայլուն հաղ-
թությունները ցույց են տվել, վոր Կարմիր հեծելազորը պրոլե-
տարիատի ձեռքում հանդիսանում է զորեղ մարտական զենք: Այ-
տոզրահատանկային մասերի գործողությունների զուգակցու-
թյունը Կհեծելազորի գործողությունների հետ՝ ուժեղացնում է
բանակի ղյուրաշարժությունը, փորձաշարժությունը:

Պակաս նշանակութուն չունի ձին հրետանու, զնդացրային
ստորաբաժանումների և զորային զուժակի մեջ: Նրա լարված և
պատասխանատու աշխատանքից մեծ չափով կախված է հրետա-
նու անխափան աշխատանքը, ռազմամթերքների, հանդերձանք-
ների, ուտեստի մթերքների և այն բոլոր բաների իր ժամանակին
մատակարարելը, առանց վորի զորքերը չեն կարող հաջողու-
թյամբ գործել պատերազմում:

Ուստի ձիու անողջությունն ու աշխատունակությունը պահ-
պանելու հոգան ամենատաղնակարգ պարտականությունն է հան-
դիսանում այն մարտիկի համար, վորին հանձնված է ձին:

Ձին պետք է լինի կայտառ, տակուն, առողջ և անխափան
կատարի իրենից պահանջվող աշխատանքը: Իսկ դրա համար յու-
րաքանչյուր մարտիկ հեծելակ և ձիավոր պարտավոր են իմանալ՝
ձիուն խնամել, խնայել նրա ուժերը և կանոնավորապես ոգտա-
գործել մարտական ձին ամեն մի պարագայում:

ԻՆՉՊԵՍ Ե ԿՍՉՄՎԱՆԾ ՁԻՈՒ ՈՐԳԱՆԻՉՄԸ


Ձին կանոնավորապես խնամելու և աշխատանքի մեջ ան-
խափան կերպով ոգտագործելու համար անհրաժեշտ է իմանալ՝
ինչպե՞ս և կազմված ձիու որգանիզմը, ինչպիսի մասերից և որ-
գաններից է բաղկացած այդ որգանիզմը, ինչպե՞ս և շնչում ձին,
ինչպե՞ս և կատարվում արյան շրջանառությունը, մարսողությունը
և այլն:

Ձիու արտաքին գննողությամբ տարբերում են հետևյալ
մասերը՝ գլուխը, պարանոցը, իրանը և վերջավորությունները (փոտ-
ներ) — առջևի և հետևի (նկ. 1):

Գլխի վրա տարբերում են՝ ծոճրակը, ճակատը, մազափուն-
ջը, գանգուրը, ականջները, քունքերը, հոնքերի վրայի կամար-

ները, աչքերը, քիթը, բերանը և շրթունքները, կզակը, այտուսի-
քը, գանաշները (նախամիզուկ)՝ առջևի վոտի վրա՝ թիակը, ուսը,
ուսատակը, յենթադաստակը, նախադաստակը, կոճղը, թագիկը և
սմբակը, հետևի վոտի վրա՝ ազգբը, սրունքը (վոլոս), թոխչքահո-
ղը, վոտնաթավթը և այլն:


Յերբ ասում են՝ ձին «վիրավորել և թագիկը», «ջարդել և
թոչելու հողը», «հատել և դավակը», ապա ձիու մարմնի մասերի
դասավորությունն ու անուններն ուսումնասիրելուց հետո հաս-
կանալի կլինի, թե ձիու ինչ տեղն է վիրավորվել, ջարդվել և
այլն:



Նկ. 1. Ձիու արտաքին սեսը

Ս.—ձիու մարմնի առջևի մասը, Բ.—ձիու մարմնի միջին մասը, Գ.—ձիու մարմնի
հետին մասը, 1—ծոճրակ, 2—ճակատ, 3—բերան (շրթունքներ), 4—աչքեր,
5—6 քիթ, 7—առնաղներ, 8—կզակ, 8a—գանաշներ, 9—պսակ, 10—ականջամերձ
գեղձեր, 11 և 13—պարանոցի սանր, 12—պարանոց, 14—կոկորդ, 15—մեղավ,
16—թիակ, 17—կուրծք, 18—արմունկ, 19—ուսատակ, 20—վերնադաստակ,
21, 21a—նախադաստակ, 21 (հետի վոտի վրա)—վոտնաթավթ, 22—23—վոտնա-
կապերի հող, 24—թագիկ, 25—սմբակ, 26—մեջք, 27—28—դոտկատեղ կամ յե-
րիկամունք, 29—սրբանոսկր կամ դավակ, 29a—պոչի վոտիկ, 30—պոչ,
31—կոզը, 32—կրծքի վանդակի ներքին մասը, 33—ազգուսկը, 34—յերանք,
35—ծայրի միս, 36—ձվապարկ, 37—ազգը, 38—ձնկան հող, 39—սրունք, 40—
լսողան, 41—թոխչքահող:


Չիու մարմնի հենք, նեցուկ և հանդիսանում կմախք: Նա բաղկացած է մի շարք վոսկորներից (նկար 2):



Նկ. 2. Չիու կմախք (բացահայտումների մեջ նվազ են կարեվորագույն վոսկորները) 1—թիակ, 2—թիակի վրայի կոճիկը, 3—ուսուկը, 4—արմուկի վոսկր, 5—արմուկի հավելամաս, 6—ճանճուկ, 7—վերնադաստակ, 8—ավելադեղ վոսկր, 9—նախադաստակի վոսկրները, 10—կողի վոսկր, 11—ազդուկ, 12—նստատեղի բլթակ, 13—ազդրի վոսկր, 14—ծնկոսկր, 15—մեծ վոլոզուկ, 16—փոքր վոլոզուկ, 17—գարշապարի բլթակ, 18—վոտնատարի վոսկրները, 19—պարանոցի վեցերորդ վոզը, 20—կրծքի առաջին վոզը, 21—գոտեհատեղի առաջին վոզը, 22—գոտեհատեղի վեցերորդ վոզը, 23 և 25—գավակ, 24—պոչի առաջին վոզը:

Կմախքի վաակները տարբեր կերպով են միանում իրար: Որինակ, հասակավոր կենդանու զլխի առանձին վոսկրները միակցվում են իրար հետ և կազմում են կարծես թե առափիններ և խոռոչներ, վորտեղ գտնվում են կենդանու կյանքի համար կարեվոր որդանները (զլխի ուղեղը, լողության որդանը, տեսողության որդանը և այլն): Կողերը շարժուն կերպով միանալով կրծքի վոսկրին և վոզներին՝ կազմում են այսպես կոչված կրծքի վանդակը, վորտեղ գտնվում են թոքերը և սիրտը: Այդ որդանների այս տեսակ դասավորությունը պաշտպանում է նրանց վր-

նասվելուց: Վոսկրների վոսկրների միացումն ամենից ավելի շարժուն է: Վոսկրների շարժուն միացումները կոչվում են հողեր: Միացման տեղերը մեծ մասամբ ծածկված են սահուն, հարթ կրծիկով: Շարժուն հողերն ունեն առաձիգ մկանուտ փոկերի նմանոց կապեր: Կապերը պահում են վոսկրների միացումն իրար հետ:



Նկ. 3. Չիու մարմնի մակերեսային մկանները

1—վերևի շուրթը բարձրացնող մկան, 2—այտի մկան, 3—ծամբու մեծ մկան, 4 և 5 կրծքի մկանի յերկու մասերը, 6—դելտայաձև մկան, 7—ուսի մկան, 8—մեջքի ամենալայն մկան, 9 և 10 փորի արտաքին թեք մկան, 11—ազդրի յերկու յիանի մկան, 12—դրսի մասերը ծարղ ջլերը:

Մկանները մեծ մասամբ դասավորված են կենդանու մարմնի վրա դրսի կողմից, կմախքի վոսկրների վրա, և հանդիսանում են այն, ինչ վոր սովորաբար անվանում են միս (նկ. 3): Մկանները բաղկացած են առանձին մանրաթելերից, վորոնք սկզբում միանում-դառնում են փոքրիկ փնջեր և ապա մեծ փնջեր: Այդ ման-

բաթեկերն ունեն կծկվելու, կարճանալու հատկութիւն: Մկանները միանում են իրենց ծայրերով վոսկրների վրայի անհարթութիւններին և ցցվածքներին: Մկանների կծկման դեպքում, որինակ՝ վտտի վրա, վոսկրների միջև յեղած անկյունը մեծանում է կամ փոքրանում, վորի հետեանքով հոդերը բացվում և կորանում են, և ձիւ մարմինը շարժվում է առաջ:

Կենդանու կյանքի համար մեծ նշանակութիւն ունի շնչառութիւնը: Շնչառութիւնը գաղարու մեծ անջանում է մահ: Կենդանիները շրջապատող ոդի հետ միասին ներշնչում են կյանքի համար հարկավոր գազը՝ թթվածինը և արտաշնչում են որգանիզմի համար վնասակար ածխածինը:

Ոդը մտնում է ունզներէրից: Շնչառութիւնը ժամանակ ձիւ ունզները լայնանում են, վորով ապահովվում է մեծ քանակութիւնը ոդի մուտքը. այդ առանձնապէս կարևոր է ձիւ համար շարժվելու, ծանրութիւններ տանելու ժամանակ և այլն:

Ռուկգների միջով ոդն անցնում է, այսպէս կոչված, քթի խոռոչը: Քթի խոռոչը ծածկված է նուրբ, թաց լորձաթաղանթով: Այդ թաղանթի վրա նստում են փոշու վնասակար մասնիկներ, վորոնք ներս են շնչվում ոդի հետ միասին, և այսպիսով ներշնչվող ոդը մաքրվում է: Քթի խոռոչից ոդն անցնում է կոճկային փողակների — շնչափողի (արախեա) և կակառքի միջով թոքերը: Այդ ճանապարհներով ոդն ազատ անցնելու ամեն մի արգելք ձիւն շնչարգելութիւն և անհանգստութիւն է պատճառում: Աջ և ձախ բախերը գասավորված են կրծքի վանդակի մեջ:

Ոդը ներշնչելու ժամանակ մկաններն առաջ են շարժում կրծքի վանդակը, նրա ծավալը լայնանում է, ոդը ծծվում է թոքերի մեջ և արյանը թթվածին է տալիս: Արտաշնչելու ժամանակ կրծքի վանդակը յետ է դնում, և բանեցրած ոդը, վորի մեջ ածխածինը գազ կա, թոքերից դուրս է մղվում նույն ճանապարհներով (բրոնխների, շնչափողի, քթի խոռոչի, ունզների միջով):

Շնչառութիւնը պրոցեսում հերթով տեղի յեն ունենում ներշնչում և արտաշնչում: Շնչառութիւնը արագութիւնը կախված է կենդանու հասակից, որվա ժամանակից, ջերմութիւնից և աշխատանքից:

Միջին հաշիւով ձիւ համար նորմալ է համարվում 8—16 շնչում մի րոպեյում (հանդիսա վիճակում):

Արդւնը կենդանի որգանիզմի մեջ կանգնած չէ մի տեղում, այլ շարունակ հոսում է վորոշ ուղղութիւնը՝ արյունատար ա-

նութներով: Այդ շարժումը կատարվում է սրտի աշխատանքի շնորհիվ: Արյունն, անցնելով թոքերով, շնչառութիւն ժամանակ ազատվում է ածխածինից և ստանում է թթվածին: Անցնելով ստամոքսաղիքային պատերով՝ արյունն ստանում է այնտեղից սննդաբար նյութեր և թոքերից ստացած թթվածին հետ միասին արյունատար անոթների միջոցով (գարկերակ) տարածում է սննդաբար նյութերը և թթվածինը կենդանու մարմնի բոլոր մասերում: Հետո մարմնի գանազան մասերից արյունը հավաքվում է առանձին արյունատար անոթների մեջ, վորոնք կոչվում են յերակներ (вена): Յերակների միջով արյունն ուղղվում է դեպի սիրտը, ապա թոքերը և նորից թարմանում է ոդի թթվածինով:

Արյունը զարկերակների (артерия) միջով անցնելիս, այդ զարկերակները մերթ ձգվում են, մերթ ընկնում: Զարկերակների պատերին այդ տատանումները կոչվում են յերակագարկի ալիք կամ յերակագարկ (пульс): Այդ տատանումների քանակը (որինակ՝ մի րոպեյում) համապատասխանում է սրտի կամ սրտի զարկերի կծկումների քանակին: Ձիւ զարկերակը շոշափում են ծնոտի ներքեի մասում: Նորմալ վիճակում ձիւ զարկերակն ունենում է մի րոպեյում 28—40 տատանում: Աշխատանքի և մի քանի հիվանդութիւնների դեպքում զարկերակն արագանում է:

Մարտադրում: Կերն ստամոքսն ընկնելուց առաջ թըջվում է ձիւ բերանում թքով, տրորվում է ատամներով և խառնվում լեզվի միջոցով: Ձին 36 տատմ ունի — 12 կարիչ (6 հատ յուրաքանչյուր ծնոտի առջևից) և 24 սեղանատամ: Բերանում այդպէս պատրաստվելուց հետո կերն առանձին բաժիններով մաս-մաս հրվում է դեպի վորկորը, վորկորից առանձին փողակի միջով, վոր կոչվում է կերակրափող, գնում է ստամոքսը, իսկ այնտեղից՝ աղիքները: Այսպէս կոչված՝ մարսողական հյութերի ներգործութիւնը (ստամոքսային հյութ, աղիքային հյութ, լյարդի լեզի և այլն) կերը մարսվում է, այսինքն լուծվում է բազազրիչ մասերի, վորից հետո կերի սննդաբար նյութերը ներս են ծծվում այսպէս կոչված՝ թելիկների (ծծակ) միջով արյան մեջ, իսկ կերի չմարսված մասերը դուրս են գալիս վորպէս կղկղանք:

Մեզի գասումը: Կենդանու կյանքի համար վնասակար գազերը (ածխածինը գազ) աղիքներից դատվում են արտաշնչուման ժամանակ: Կերի անպետք և դժվարամարս աղիք մասերը հեռացվում են վորոտիքից հետույքի անցքով:

Իսկ որգանիզմի ջրալի թափփուկները դատվում են կեն-

զանու մարմնից վորպես մեզ: Մեզի գատումը (դուրս գալը) կատարվում է հետևյալ ձևով:

Արյունը, մտնելով յերկամուկները, սրան է տալիս որգանիզմի ջրալի թափթփուկները: Յերկամուկներից այդ թափթփուկներն առանձին անցքերի — միզածորանների միջով անցնում են միզապարկը: Միզապարկը պարբերաբար գատարկվում է, և մեզը դուրս է գալիս միզանցքով:

Ձիու մեզը զեզնավուն է, պղտոր, թանձր: Տարբեր հիվանդությունների զեպքում մեզի գույնը, թանձրությունը և նրա բաղադրիչ մասերի պարունակությունը կարող են փոխվել:

Կենսոնտական նյարդային համակարգությունը բազկացած է գլխի և մեջքի ուղեղից: Գլխի ուղեղը բաժանվում է մեծ, փոքր (ուղեղիկ) և յերկարավուն ուղեղների: Ուղեղը հանդիսանում է կարծես որգանիզմի կենտրոնական կայանը: Դեպի այդ կայանը զգայուն նյարդերի միջոցով, վորպես հեռադրալարերով, գալիս են ազդանշաններ մարմնի զանազան մասերից (կաշվի, աչքերի, ներքին որգանների և այլն կողմից), թե ինչ է կատարվում շրջապատող պարագաներում և հենց կենդանու որգանիզմում:

Յերբ այդ ազդանշաններն ընդունվում են, ուղեղից ուրիշ (շարժիչ) նյարդերով մարմնի զանազան մասերն է անցնում պատասխանող ազդանշանը: Որինակ՝ յեթե ուղեղն ազդանշան է ըստանում, թե կենդանին մարմնի մի վորևե մասում ծակոց է ըզզում, այդ զեպքում ուղեղից պատասխանող ազդանշան է ստացվում, և կենդանին խուսափում է ծակոցից:

Փոքր ուղեղը գտնվում է գլխի ուղեղի հետևի մասում և միացած է նրան: Փոքր ուղեղը պարունակում է իր մեջ կենտրոններ, վորոնք կանոնավորում են մկանների կծկումը, և ապահովում է մարմնի հավասարակշռությունը հանդիստ վիճակում և շարժումներ անելիս: Յերկարավուն ուղեղը գտնվում է փոքր ուղեղի տակ և զեկավարում է որգանիզմի՝ կյանքի համար այնպիսի կարևոր աշխատանք, ինչպես արյան շրջանառությունն է, շնչատությունը, մեզի, քրտինքի գատումը և այլն: Յերկարավուն ուղեղը փասովելու զեպքում կենդանին վայրկյանապես մահանում է:

Մեջքի ուղեղը գտնվում է վորնաշարի մեջքուղեղային անցքում և հանդիսանում է նյարդային զրդիոնների հազորդիչ՝ մարմնի որգաններից և հյուսվածքներից զեպի գլխի ուղեղը և ընդհակառակը: Բացի դրանից, մեջքի ուղեղում գատավորված են

նյարդային կենտրոնները, վորոնք զեկավարում են մկանների շարժումը:

Մեջքի ուղեղի քայքայվելու և փասովելու զեպքում գագարում է գործելուց մարմնի այն մասը, վորը գտնվում է այդ փասովածքի հետևում և ներքևում: Այդ յերևույթը կոչվում է կաթված:

Որինակ՝ մեջքի ուղեղը փասովելու զեպքում գավակի շրջանում կենդանու ամրող հետևի մասը գագարում է գործելուց, վորտերը չեն կարողանում շարժվել, փասոված մասի ներքևի մասը ծակելիս կենդանին այդ ծակոցները չի զգում և այլն:

Փոփխություններն ձիու որգանիզմի մեջ՝ ախտահանի ժամանակ: Աշխատանքի ժամանակ ձիու շնչատությունն արագանում է, և սրտի աշխատանքն ուժեղանում, յերակազարկն արագանում է, մարմնի ջերմությունը բարձրանում, քրտինքի գատումն ուժեղանում է: Ձիու մարմնի նորմալ ջերմությունը 37,5 — 38,5° է: Չափից դուրս աշխատանքի և սաստիկ հոգնածություն ջերմությունը կարող է բարձրանալ մինչև 40° — 40,5°, ներշնչման և արտաշնչման թիվը մի րոպեյում հասնում է մինչև 60 — 65-ի, յերակազարկը հասնում է 80 — 85 տատանման՝ մի րոպեյում: Ձիու յերկարատե ծանր աշխատանքի զեպքում նրա մկաններում և արյան մեջ կուտակվում են բանեցրած փասակար նյութեր (ածխածիթու և այլն): Այդ պատճառով ել ձին կարող է աշխատել մինչև մի վորոշ սահման, վորից հետո պետք է հանդիստ տալ նրան: Հանգստանալու ժամանակ այդ փասակար նյութերն ափսասակար են դառնում և դատվում են որգանիզմից:

Յեթե փասակար է չափազանց և յերկարատե (ուժեղացրած) աշխատանքը, ապա փասակար է առողջ ձիու համար նաև պակաս աշխատանքը: Աշխատանք չլինելու զեպքում ձին գիրանում է, մկանները դառնում են թորշմած, պակասում է ախորժակը, առաջ են գալիս վորկապություն և ծակոցներ՝ կերը վատ մարտելուց, խանցարվում է արյան շրջանառությունը, նկատվում են վորտերի ուռուցքներ և այլ հիվանդություններ: Ուստի, յեթե ձիու համար աշխատանք չկա, անհրաժեշտ է որական յերկու ժամ ման ածել ձիուն կամ հեծավարժում կատարել:

Տափաստանային ջահել ձիերին մաքրելու և պայտելու պետք է վարժեցնել աստիճանաբար, սկսելով բաշի արմատը ձեռքով կամացուկ շփելուց, հաջորդաբար կիրառելով մահուդի կտոր, խոզանակ և ձողտակեմ: Պայտելուն ընտելացնելու համար պետք է մաքրելիս և կանգնելու տեղում (в станке) հաճախ բարձրացնել ձիու վտաները: Յերբ ձին ընտելանում է դրան, պետք է զգուշությամբ հարվածել սմբակներին սկզբում ձեռքով, իսկ հետո վորեկ ամուր բանով (փայտի կտորով, փոքրիկ մուրճով և այլն), միայն դրանից հետո յեն սկսում սմբակները մաքրել և պայտել:

Ջահել նորոգածիերն առաջին յերեք ամսվա ընթացքում, յերբ նրանք գտնվում են զորամասում, ստանում են, բացի խոտի նորմայից, լրացուցիչ չոր խոտ՝ որական մի կիլոգրամ 200 գրամ: Ջահել ձիերը վարսակին սովորում են հեռոճեակ, սկսելով որական 400 գրամից՝ այն հաշվով, վոր յերկրորդ տասնորյակի վերջում վարսակի չափը հասնի իր նորմային:

Ջահել նորոգածին, վոր դեռևս վարժված չէ, խամ և, չգիտե վոչ սանձ և վոչ էլ սբուհը, շարքային ծառայություն մտնելու ամբողջ նախապատրաստման պրոցեսում պահանջում է առանձին ուշադրություն, փաղաքշական վերաբերմունք, համառ և անդադրում աշխատանք վարժեցնելու մեջ: Ուշագիր վերաբերմունքը դեպի ձին և հաճախակի խրախուսանքը ձայնով, հաց, շաքար, գազար, վարսակ և այլն տալը — ձիուն նախապատրաստելու հիմնական կանոնն են հանդիսանում: Վատ վերաբերմունքը դեպի ձին նրա մեջ վատ սովորություններ կառաջացնի. ձին կսկսի խփել հեռեի վտաներով, կծոտել, պախուրցից փախչել և այլն: Այդ սովորություններն ուղղելը շատ դժվար է, իսկ շատ հաճախ՝ բոլորովին անկարելի յեն:

Վորպես կանոն, յուրաքանչյուր ձի ամբացվում է մի կարմիր բանակայինի՝ նրա ծառայության ամբողջ ժամանակաշրջանում, ըստ վորում կարմիր բանակայիններին ընտրում են ըստ այն ձիու բնավորության, վորին նա պետք է սպասարկի: Որինակ, տաքարյուն ձիու համար նշանակում են հանգիստ ընտրության տեր մարդու:

Ձիու հեռ պետք է վարվել մեղմորեն, հանգիստ, համբերությամբ, բայց միևնույն ժամանակ համարձակորեն: Ավելորդ զո-

չումներից, խթանումներից, ցնցումներից, ձեռքը կամ մտրակը թափահարելուց ձին դառնում է կասկածոտ, չար, վախկտ, անհնազանդ: Ձիուն ամեն անգամ պետք է ստիպել համառորեն, բայց միևնույն ժամանակ խեղացի կերպով: Յեթե պահանջվում է պատժել ձիուն այս կամ այն պահանջը չկատարելու համար, պետք է պատժել իսկույն ևեթ, և վոչ թե միառժամանակ անցնելուց հետո, այլպես պատիժը չի հասնում իր նպատակին:

Չպետք է մոտենալ ձիուն լուռ և անապասելի կերպով: Ըսկըզբում պետք է ձայն տալ նրան և հետո միայն մոտենալ, ըստ վորում պետք է մոտենալ այն կողմից, վորտեղից նայում է ձին՝ վորպեսզի նա տեսնի, թե ով է մոտենում իրեն: Չպետք է նաև անհանդատացնել ձիուն առանց պատճառի, յերբ նա հանգստանում է պակամ՝ ախոռում կամ ձիակապարանում: Յեթե հարկավոր է ձիուն բարձրացնել, պետք է անել այդ առանց զոռալու, առանց նրա զավակին մտրակով խփելու: Պետք է ձայն տալ ձիուն, մոտենալ նրան, ձեռքով շոշափել պարանոցը, իսկ անհրաժեշտության դեպքում կամաց քաշել սանձից: Յեթե ձիու կանգնեցնելու տեղում կան տոփաներ (ցիմբալներ), պետք է հեռակել, վոր ձին վեր կենալու ժամանակ չընկնի տոփանի տակ:

Ձի կարելի թույլ տալ, վոր ձին կարուկ շրջադարձ կատարի, մանավանդ նեղ տեղում: Այդ կարող է առաջացնել ուսի հողի փնջերի ձգում և կազություն, վոր յերբեմն դժվարին է բուժել: Ուստի, յերբ ձին դուրս են հանում իր տեղից, սկզբում նրան յետ են քշում ախոռի անցքը և դարձնում են արդեն անցքում:

Անշնորհ խնամելուց, անկանոն պահելուց և ոգտագործելուց ձին հիվանդանում է, շուտով հոգնում է վոչ միայն անպետք է դառնում աշխատանքի համար, այլ և կարող է սատկել:

ՁԻՈՒՆ ԿԵՐ ՏԱԼ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Ձիու առողջությունը և անխափան աշխատանքը պահպանելու համար չափազանց կարևոր նշանակություն ունի կերտալու կանոններին հետևելը:

Ձիուն կեր տալու ժամանակ մարտիկը պետք է խստորեն հեռեի կեր տալու այն կանոններին, վորոնք նշվում են ԲԳԿԲ-ի կանոնադրությունների և հրահանգների մեջ:

Ամենից առաջ կարմիր բանակայինը պետք է իմանա կերա-

բաժինն ըստ կշռի՝ իր ձիու համար (այսքան զբամ) և ըստ ծափալի (այսքան կաթսա կամ չափ) և հետևի, վոր ստացվող կերի յուրաքանչյուր զբամը հասնի ձիուն, չկորչի: Վարսակը չպետք է թափվի գեանին, ձին չպետք է կոխկուտի խոտը:

Նայած ձիու կշռին, գիրությանը և աշխատանքին, մի քանի ձիերի նշանակում են ավելացրած կամ, ընդհակառակը, պակասացրած կերաբաժին (անհատական կերաբաժին):

Պետք է հաշվի առնել, վոր ձիու ստամոքսը համեմատաբար փոքր ծավալ ունի, ուստի չի կարելի նրան միանգամից տալ կերի, մանավանդ վարսակի մեծ բաժիններ: Ավելի լավ է տալ կերը հաճախ, բայց փոքր բաժիններով, որինակ՝ 4 կիլոգրամ վարսակով կերակրել 3 նվազ, 5 — 6 կիլոգրամ վարսակով՝ 4 նվազ, 4 — 5 կիլոգրամ խոտով 6 — 8 նվազ:

Ներկայումս ԲԳԿԲ-ում ընդունված են կերաբաժնի հետևյալ նորմաները.

	Վարսակ (զբամով)		Խոտ (զբամով)
Հեծելազորային զվարճների և КKYKC-ների ձիերին	4450	Հեծելազոր ձիերին	4450
Հրանոթային արկղավոր լուծքի այլ և հեծյալ զորամասերի զրն-դացրային սայլերի ձիերին	5500	Հրետանու ձիերին	5800
Այլ զորամասերի հեծկան ու զուսակի ձիերին	4000	Գուսակի ձիերին	4200

Բացի զբանից, բոլոր տեսակի ծառայությունների ձիերին տրվում է 15-ական զբամ աղ և 1600-ական զբամ չոր հարդ՝ փրստցի համար:

Ձիերին ախտառում պահելու դեպքում սովորաբար կերակրում են նրանց վարսակով և խոտով՝ կերարկղիներից: Անպատճառ պետք է հսկել կերարկղիների մաքրությունը և կանոնավորությունը, ժամանակին պետք է մաքրել նրանց փոշին, աղբը և կերի մնացորդները, հետևել, վոր կերարկղներում չմնան յերկաթի կտորներ, մեխեր, փայտի կտորտանք և այլն, վորոնք կարող են վիրավորել ձիերին:

Վորպեսզի վարսակը չթափվի, ավելի լավ է մատուցել յուրաքանչյուր ձիուն առանձին տոպրակների մեջ: Տոպրակները պետք է պահել մաքուր, ամեն մի կերակրելուց հետո չորացնել և տաս-

նորյակի մեջ առնվազն յերկու անգամ լվանալ: Յուրաքանչյուր ձիու համար պահում են յերկու տոպրակ, վորոնցից մեկը չորացնում են, իսկ մյուսով վարսակ են տալիս: Տոպրակների վրա գրում են ձիերի անունները, վոր նրանք փոխա չընկնեն. այն տոպրակների միջոցով, վորոնցից սղավել են հիվանդ ձիերը, կարող են տարածվել վարակիչ հիվանդություններ:


Անհրաժեշտ է հիշել, վոր ձին կարող է ծանր հիվանդանալ՝ վատ, ցածորակ կերից՝ նեխած վարսակից, բորբոսնած, փտած խոտից, փչացած, հին, թրջված թեփից, բորբոսով ծածկված հացից և այլն:

Յերբեմն կերի մեջ պատահում են թունավոր խոտեր (աստղախոտ, կաթնուկ, ոչինդրի մի քանի տեսակները և այլն), վորոնք կարող են թունավորել ձիերին (նկ. 4): Պետք է հետևել, վոր վարսակի մեջ չլինեն պատահական կողմնակի խառնուրդներ (ապակի, լարեր, յերկաթի կտորներ). այդ պատահական խառնուրդներն անպատճառ զատվում և հեռացվում են կեր տալուց առաջ: Կերը չի կարելի տալ գեանի վրա, վորովհետև կերի հետ միասին ստամոքսը և փորոտիքն ընկած հողը կարող է հիվանդաբուծություն առաջացնել: Վնասակար է կերակրել ձիերին նոր կալսած հացահատիկով (մանավանդ հաճախով) և հին ընկած-մնացած, ջերմացած հնձած խոտով:

Ձիերի համար սովորական կերերից միանգամից անսովորին անցնելը նույնպես կարող է հիվանդություններ առաջացնել նրանց մեջ: Որինակ, յեթե ձիուն ամբողջ ժամանակ վարսակ տան, իսկ հետո միանգամից սկսեն կերակրել քուսպով, համակցված կերով կամ յեզիպտացորենով, ձին կարող է հիվանդանալ: Ուստի յերբ անցնում են ձիու համար անսովոր կերի, որինակ՝ գարուն, արաջին որը տալիս են 300 — 400 զբամ զարի և, ավելացնելով ամեն որ 200-ական զբամ, միայն 6-10 օրից հետո յեն հասցնում զարու կերաբաժինը վարսակի որակյան կերաբաժնի մի յերրորդին կամ կեսին: Զահել նորոգածիերը վարսակին ընտելանում են նույնպես աստիճանաբար:

Մի քանի կերեր պահանջում են, վոր կերակրելուց առաջ նախապատրաստվեն: Գարին և յեզիպտացորենը, վոր շատ պինդ կճեպ ունեն, տրորում կամ մանրացնում են առանձին մեքենաներով — հատամանրիչներով: Գուսպը մանրացնում են քուսպմանրիչով կամ կացնի բութ կողմով ընկույզի չափ: Հարզը տալիս են կարած կտորի կամ, ինչպես ասում են, այլ կերպ, բըր-

դոնի, յերկարությունը լուցկուց մի քիչ կարճ պիտի լինի ($2\frac{1}{2}$ — 3 սանտիմետր): Չափազանց մանր կտրտած հարզը ձին լավ չի ծածուկում և զբանից կարող է ստամոքսի և աղիքների հիվանդությունն առաջանար: Շատ ոգտակար է հարզ տալ վարսակի հետ խառնած: Բացի զբանից, հարզը թրջում են ազի ջրով և վրան հաճարի այուր են շաղ տալիս:



Նկ. 4. Քունավոր խոտեր

կընկնի կերակրիկների (մսուրների) մեջ, ախոտի պատերի վրա, և ձիերը կներշնչեն այն, վորից կարող են հիվանդանալ շնչառության որգանները: Շատ չոր խոտը ոգտակար է կեր տալուց առաջ թրջել աղաջրի մեջ: Վոչ մի զեպքում ձիերին չկերակրել նեխած խոտով:

Ստոր տալիս են ամբողջ որվա ընթացքում փոքրիկ բաժիններով, վորոնց ծանրությունը պետք լինի մոտավորապես $\frac{1}{2}$ կիլոգրամ: Առաջուց կարմիր բանակայինները պատրաստում են այդ բաժինները և որվա ընթացքում 6 — 8 անգամ ախոտի հերթապահները բաժանում են այդ խոտը: Սոտի փոքրիկ բաժիններով կերակրելիս՝ ձիու ստամոքսը միանգամից չի ծանրարեոն-

Ստոր թեփը կարելի չէ տալ չոր, իսկ մանր թեփը խառնում են ջրով թրջած հարզի հետ:

Չոր, մանավանդ հակ արած խոտը կեր տալուց առաջ ցնցահարում են, դնում ցնցահարումը կատարում են վոչ թե ախոտում կամ ձիակապարանի մոտ, այլ վորոչ հեռավորության վրա՝ քամու ուղղությամբ, այլապես փոշին ցնցահարելուց

վում շատ խոտ տալով. բացի զբանից, ձին ախոտում զտնված ժամանակ, որվա ընթացքում զբաղված լինելով խոտ ուտելով, ազատ է մնում վատ սովորություններից (կերակրիկները կրծելուց): Սոտի սրական տացքի մոտավորապես մի յերորդը տալիս են ձիուն զիշերը:


Վարսակ տալիս են որվա մեջ սովորաբար յերեք անգամ՝ առավոտյան, կեսօրին և յերեկոյան:

Ձիու որգանիզմը, մանավանդ ուժեղ աշխատանքի ժամանակ, ավելի շատ աղ է վատնում, քան կա տված կերերի մեջ: Որինակ՝ ձիու կաշվի վրա ուժեղ աշխատանքից հետո մնում է փոշենման աղի մոխրազույն փառ, վորը դուրս է գալիս որգանիզմից քրքրաբնքի հետ միասին: Այս պատճառով էլ ձիերին տալիս են որական վոչ պակաս, քան 15 գրամ աղ, նայած կերերի վորակին և ձիու աշխատանքին: Աղը տալիս են վարսակի հետ խառնած կամ յուժում են ջրի մեջ և այդ լուծույթով թրջում են խոտը:

Աղի պակասությունն որգանիզմի մեջ, մանավանդ արշավանքներում և սաստիկ շոգ յեղանակին, ունենում է այն հետեվանքը, վոր ձիու կենդանի քաշը պակասում է, ձին նիհարում է: Այդ հանգամանքը չպետք է մոռանալ մանավանդ զաշտային աշխատանքների պայմաններում: Այս պատճառով էլ աղի տացքը ամառն արշավանքների ժամանակ ավելացնում են:

Առատավայրերից ոգսվելը և կանաչ խոտով կերակրելը շատ ոգտակար է ձիու առողջության համար: Արոտավայրում ձին շնչում է մաքուր ող, ոգավում է արեգակից. խոտով կերակրվելը բարվորում է մարտողությունը, արոտավայրում ամրապնդվում են սմբակները և այլն: Ձիերին հնձած խոտով կերակրելիս կամ արոտավայրից ոգավելիս՝ պահպանում են չոր կերից (վարսակ, չոր խոտ) թարմ խոտին աստիճանաբար անցնելու կանոնը, այլապես ձիերը կարող են հիվանդանալ փորլուծությամբ: Առաջին որերը տալիս են քիչ կանաչ խոտ (4 — 5 կիլոգրամ որական) և ձիերին բաց են թողնում արոտավայրը կարճ ժամանակով, իսկ հետո աստիճանաբար ավելացնում են կանաչ խոտի տացքը: Արոտատեղին բաց թողնելուց առաջ ձիերին լրացուցիչ կերտով կերակրում են չոր խոտով, մանավանդ թարմ խոտը յերևալու ըսկըզրի սրերում: Արոտավայրի ոգավելու զեպքում պարտադիր է տալ ձիերին վարսակ և չոր խոտ, զոչ այդ տացքը կարելի չէ կրճատել կիսով չափ:

11-287469



Արոտավայրը դուրս բերելուց առաջ, յեթե պայմաններ թույլ են տալիս, ձիերին պայտաթափ են անում և սմբակները մաքրում սովորիչով:

Չի կարելի բաց թողնել ձիերին արոտատեղին աշխատանքից անմիջապես հետո, այլ պետք է թողնել, վոր նրանք հանգստանան:

Արոտավայրեր և խոտը հնձելու տեղեր ընտրում են խոտառատ վայրերում: Արոտավայր ընտրելու դեպքում հաշվի յեն անում լավ ջրաբերի առկայությունը (դետեր, լճեր, լավ ջուր ունեցող ջրհորներ): Յանկալի յե, վոր արոտավայրի մոտ լինի ծածկ կամ ծառաստան, վորտեղ կարելի լինի ժամանակավորապես կապել ձիերին, նրանց վատ յեղանակից կամ միջատներից (բուռերից, մոծակներից և այլն) պահպանելու համար: Յեթե ցերեկը շատ տաք է, և ձիերին սաստիկ անհանգստացնում են միջատները, մանավանդ կետորին, այդ դեպքում ձիերին արածացնում են գիշերով կամ ցերեկվա վաղ և ուշ ժամերին:

Վոչ մի դեպքում չի կարելի ողտվել արոտավայրերից և խոտ հնձել այն տեղերից, վորտեղ կենդանիների մեջ վարակիչ հիվանդությունների (սիբիրախտ և այլն) դեպքեր են յեղել, նաև կենդանիների գերեզմանոցներում և նրանց շրջակայքում: Անհրաժեշտ է հիշել, վոր մի քանի վարակիչ հիվանդություններ (մանավանդ սիբիրախտը) շատ հեշտություններ տարափոխվում են կենդանիներին՝ հիվանդություններով վարակված արոտավայրերն ողտազործելու դեպքում: Նույնպես պետք է խուսափել խոնավ, ճահճոտ արոտավայրերից և մեծ քանակությամբ մացառուտներ ունեցող արոտավայրերից: Մացառուտներով ծածկված խոնավ արոտավայրերում ձիերը կարող են հիվանդանալ ձիճուներով և պիրոպլազմոզով:

Արոտավայրերում գտնվող ձիերը պահանջում են մշտական հսկողություն: Ձիերը պետք է արածեն իրենց համար հատկացված հողամասերում, չվազվզեն և չմոտենան յերկաթուղու գծին, սեպ ափերին և փոսերին: Սոտ հնձելու և ձիերի համար հատկացված արոտավայրերում չի թույլատրվում արածացնել տեղական բնակչության անասունները: Բացի դրանից, անհրաժեշտ է հետեվել, վոր ձիերն իրար չխփեն. անհանգիստ և անհնազանդ ձիերին պետք է արածացնել առանձին:

Ջուրը կազմում է կենդանու կշռի համարյա $\frac{3}{4}$ -ը, և ջրի պակասությունն որգանիզմի մեջ առաջ է բերում ընդհանուր թուլություն, սրտի աշխատանքի, մարսողության թուլացում և այլն: Բոլոր կենդանիները, վորոնց թվում և ձին, ավելի հեշտություններ գիմանում են սննդի պակասին, քան ջրի: Սմեկու ջուրը պետք է լինի մաքուր, դուլալ, առանց նեխահոտի և նեխահամի: Բանի վոր վարակիչ հիվանդությունները հեշտություններ անցնում են կենդանիներին ընդհանուր ջրաբերի միջոցով, այդ պատճառով էլ ձիերին ջրում են առանձին դուլվերով: Այդ դեպքում յուրաքանչյուր ձիու հատկացնում են առանձին դուլ և նրա վրա դրում են ձիու անունը, վորպեսզի դուլները չշփոթեն իրար հետ (անհատական ջրաբեր):

Ծայրահեղ դեպքում ձիերին ջուր են տալիս տաշտերից, վորոնց սմբացնում են զորամասերի ստորաբաժանուհներին (դասակ, եսկազրոն):

Յեթե ախոռներում կան ջուր խմելու գուռեր՝ ջուրը պահելու և տաքացնելու համար (ձմեռը), այդ դեպքում չի կարելի ջուրն առանց փոխելու պահել նրանց մեջ մի սրից ավելի: Յերեկոյան խմելուց հետո մացած ջուրը բաց են թողնում և անմիջապես նորից լցնում են, վորպեսզի գիշերը, առավոտյան դեմ ջուրը մի քիչ տաքանա առավոտյան ջրաբերի համար (մանավանդ ձմեռը): Գուռերը պետք է վերեից ծածկվեն կափարիչներով, վորպեսզի նրանց մեջ փոշի և կեղտ չթափվի:

Գուռերը և տաշտերը պետք է պահպանվեն կատարելապես մաքուր, մաքրվեն վորքան կարելի յե հաճախ և վեցորյակի մեջ առնվազն մի անգամ մաքրվեն յեռացրած ջրով:

Ծանծաղ, հեշտ պղտորվող գետակից ջուր խմելիս կարելի յե ջրբանդ շինել և բաց թողնել ջուրը փողրակով, այդ դեպքում ջուրը պարզ կլինի, հնարավոր կլինի փողրակներից լցնել դուլները և խմեցնել ձիերին:

Ձիերին ջրում են սրական 2—3 անգամ՝ հատիկային կեր տալուց առաջ:

Աշխատանքից հետո կարելի յե ջուր տալ ձիուն միմիայն այն ժամանակ, յերբ նա կհանգստանա, կհանգարտվի և նրա քրտինքը կցամաքի: Սովորաբար դրա համար պահանջվում է 1—2 ժամ՝ նայած աշխատանքի տևողությունը, լարվածությունը և ողի ջերմությունը:



Ձիու մարմինը դրսից ծածկող կաշին պաշտպանական միջոց է արտաքին վնասումներից և վարակիչ հիվանդությունների մի քանի զրգոհիչների ներս մտնելուց: Բացի դրանից, կաշին շոշափման որդան է: Շնորհիվ նյարդերի, վորոնք վերջանում են կաշվի մեջ, ձին զգում է տաքություն, ցուրտ, ցավ և այլն:

Կաշին և նրան ծածկող մազերը նպաստում են ջերմության պահպանմանը որդանից մեջ: Կաշվի հաստությունը (դանդաված) մեջ գտնվող՝ քրտնքի գեղձերը քրտինք են արտադրում: Ճարպագեղձերը կաշվի ծածկույթի յերեսը կաշվի ճարպ են հանում, վորը քսվում է մազերին. դրանից մազերը դռնում են ավելի կակուզ (չեն կտորտվում) և ջուր չեն ընդունում նրանք: Ձիու մարմինը ծածկող մազերը տարբեր նշանակություն ունեն: Բացի սովորական, աչսպեա կոչված՝ ծածկող մազերից, ձիու շրթունքների վրա կան զգայուն, շոշափող մազեր: Կոճի (խոզունի) մազերը պաշտպանում են կոճի տակի քնքույշ կաշին խոնավությունից, ցրտից և տաքից: Պոչի և բաշի յերկար մազերը ոգնում են ձիուն միջատներին քշելու և այլն:

Թե վորքան կարևոր է կաշվի նշանակությունը, կարելի չե դատել այն բանից, վոր, որինակ, յեթե լաքով ծածկենք կաշին, կամ յեթե կաշվի կեսից ավելին վնասվի, որինակ՝ այրվածքների հետևանքով, ձին կարող է սատկել:

Կենդանու կաշին շարունակ կեղտոտվում է: Կաշվի ծալքերում և մազերի մեջ փոշի և կեղտ են նստում: Բացի դրանից, կաշվի վերին խավը շարունակ դատում է թեփ, վորը խառնվում է քրտնքին և ճարպին: Կաշվի կեղտավելը նպաստում է կաշվի հիվանդությունների զարգացմանը (քոս՝ մրմջուկ, մազերի դյուրարեկություն, եկղեմա և այլն): Այդ պատճառով ել ամեն մի կենդանու կաշին մաքուր պետք է պահպանել: Այդ վերաբերում է մանավանդ ձիուն:

Կաշին մաքուր պահելու համար ձին մաքրում են, յողացնում և յվաճում: Մաքրելու գործողությունը կատարվում է ձիակապաբանում, միայն, վորպես բացառություն, վա յեղանակին կարելի չե կատարել ախոռում: Այդ դեպքում պետք է բացել պատուհաններն ու դռները, բայց միայն մի կողմից, վորպեսզի միջանցիկ քամի չլինի: Այսուամենայնիվ պետք է խուսափել ախոռում մաքրելուց, վորովհետև փոշին ցրվելով՝ ընկնում է պատերի վրա,

կերակրները, կերի վրա, և ձիերը ծծում են այդ փոշին: Ամենից լավ է մաքրել ջրաբերից հետո, վորովհետև ձին կարող է կեղտոտվել, յեթե ջրաբերը գտնվում է ախոռից հեռու: Բացի դրանից, մաքրելու գործողությունը տաքացնում է ձիուն, յեթե նա քիչ սառել է ջուր խմելուց հետո (մանավանդ ձմեռը կամ աշնանը):

Մաքրելու գործողությունը չի կարելի կատարել կերակրելու ժամանակ, վորովհետև այդ շեղում է ձիուն ուտելուց, նա անհանգիստ է դառնում, դեռ ու դեն է ցրում կերը և ավելի վատ է մարտում:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել ձին մաքրելու վրա մազաթափի ժամանակ և աշխատանքից հետո: Ձի կարելի ուժով պոկել ձմեռը թափվող մազերը. այդ ցավ է պատճառում ձիուն և նա հետագայում հակառակում է մաքրելուն:


Յուրաքանչյուր ձի ունի խնամքի առանձին առարկաներ՝ խոզանակ, քերիչ, մահուղի կտոր և այլն: Այդ առարկաները պահվում են առանձին արկղի մեջ ամեն մի ձիու կանգնելու տեղի մոտ: Արկղի և հենց խնամելու առարկաների վրա գրում են ձիու անունը, վորպեսզի այդ առարկաները չշփոթեն իրար հետ: Խնամքի առարկաների այդ տեսակ անհատական պահպանությունը կանխում է վարակիչ հիվանդությունների մի ձիուց մյուսին անցնելու հնարավորությունը:

Արգելվում է ձիերին մաքրել քերիչով, վորովհետև քերիչի առամենը սաստիկ զրգոտում են ձիուն և կարող են վնասել նրա կաշին:


Քերիչով մաքրում են միայն խոզանակը մազերից և կեղտից: Այդ նպատակով քերիչը պահում են ափի մեջ հորիզոնական ուղղությամբ, առամենը դեպի վեր, և խոզանակն անց են կացնում քերիչի առամենի վերևից այնպես, վոր ամբողջ խոզանակը սկզբից մինչև վերջը անցնի քերիչի առամենի ուղղությամբ: Այն ժամանակ խոզանակի վրայի ամբողջ կեղտն ու թեփը մտում են քերիչի վրա: Ձի կարելի քերիչը քսել խոզանակի վերևից. այդ դեպքում կեղտը թափվում է խոզանակի ներսը և հետո նորից անցնում ձիու մարմնի վրա:

Ձին մաքրում են հետևյալ ձևով: Նախ մաքրում են ձիու մարմնի ձախ կողմը, իսկ հետո աջը (այդ համարվում է մաքրման շրջան):


Առաջին անգամ (առաջին շրջան) խոզանակով մաքրում են ավելի կոշտ կեղտը:




Նկ. 5. Ձիու մարմնի յեւ պարանոցի մաքրումը (կանոնափոր):



Նկ. 6. Ձիու մարմնի յեւ պարանոցի մաքրումը (անկանոն):



Նկ. 7. Ձիու վոսկերի մաքրումը (կանոնափոր):



Նկ. 8. Ձիու վոսկերի մաքրումը (անկանոն):

Յերկրորդ անգամ (յերկրորդ շրջան) խողանակով մաքրում են ավելի թեթև կեղտը և թեփը, վորոնք մնացած են լինում ձիու մազերի մեջ:

Յերրորդ անգամ (յերրորդ շրջան) թաց մահուղի կտորով մաքրում են հենց մազերը, ըստ վորում հեռացնում են թեթև փոշին և թեփը:

Չորրորդ անգամ (չորրորդ շրջան) ձիու մարմինը նորից մաքրում են խողանակով:


Հինգերորդ անգամ (հինգերորդ շրջան) ձին մաքրում են շատ թեթև թրջած մահուղով՝ միայն մազերի ուղղությամբ, և սղալում են խողանակով:

Մաքրման այդ յեղանակը չի թողնում, վոր խողանակը չափից դուրս շփվի միեկուսին տեղում. մազը չի տաքանում, կաշվի ճարպը չի վերցվում, մազը չի կորցնում իր առաձգականությունը և չի կտրավում:

Մարտիկը ձախ ձեռքումը բռնելով խողանակը, իսկ աջում՝ քերիչը, կանգնում է ձիու ձախ ուսի դիմաց՝ վտանները լայն չռած և ծնկների մոտ չձռնելով. ձին աջ կողմից մաքրելիս՝ խողանակը վեցնում են աջ ձեռքը, իսկ քերիչը՝ ձախ ձեռքը (նկ. 5—8): Այդպես կանգնելու զեպքում ձեռքը մեծ թափ է ստանում և ընդգրկում է ձիու մարմնի մեծ մասը: Յեթև վտաններն իրար են կըցված, այն ժամանակ ձեռքը չի կարող մեծ թափ ունենալ, մաքրվում է ձիու մարմնի մի փոքրիկ մասը և մաքրելու վրա ավելի շատ ժամանակ է դորձադրվում: Ձիու մարմնի վրա խողանակով յերկու-յերեք շարժում անելուց հետո խողանակը մաքրում են կեղտից և թեփից: Խողանակը տանում են քերիչի վերևից վաղ թե զեպի մաքրողը, այլ մաքրողից հեռու: Այն ժամանակ ձեռքը շրջանային և շարժում և խողանակը մաքրելու ժամանակ սրբվում է քերիչով, վորը դնում են ներքևից: Այդ ետ անտեսում է ժամանակը:

Խողանակն անց են կացնում ձիու մարմնի վրայով՝ մազերի ուղղությամբ և նրանց հակառակ: Խողանակը մազերին հակառակ տանելիս՝ չեն սեղմում (ձեռքը հանդատանում է), մազերը միայն մի թեթև խճճվում են և նրանց մեջ մնացած կեղտն ու թեփը թռչում են վերև: Խճճված մազերի հեռքով տանում են խողանակը մազերի վրայով արգեն սեղմելով, և այսպիսով հավաքում են մազերի վերևը թռած ամբողջ թեփն ու կեղտը:

Դրախոր ձախ կողմից մաքրելու զեպքում խողանակն անում են ձախ ձեռքը, պախուրցն ականջներից հեռացնում են՝ ինչքան կարելի չէ շատ: Քերիչն անում են աջ ձեռքը, ըստ վորում նույն աջ ձեռքի միջնամատով բռնում են պախուրցի փոկը. այսպիսով քերիչը պահում են ատամները զեպի վեր, ձիու աչքերից հեռու: Ձիու գլուխն աջ կողմից մաքրելու ժամանակ խողանակն անում են աջ ձեռքը, իսկ քերիչը՝ ձախ (նկ. 9 և 9a):



Նկ. 9. Ձիու գլուխը մաքրելը (կանոնավոր):

Խողանակով կատարում են շրջանային շարժում ականջի շուրջը (փոքր շրջան) և ականջի ու աչքի շուրջը (մեծ շրջան): Խողանակն ամեն անգամ

տանում են պարանոցի կողմից, ծոճրակի վերևից: Մաքրելու այդ յեղանակը կիրառելիս ձին չի տեսնում խողանակը և նրա աչքերը զերծ են մնում հրասպիլուց: Այս խողանակով մաքրում են ձիու գլխի մյուս մասերը և ամբողջ գլուխը մաքրում են մահուղի կտորով:

Բաժը մաքրելու ժամանակ հանը չպետք է դորձածել, վորովհետև ստնքը պոկում է մազերը և ցավ է պատճառում ձիուն: Բաշը մաքրելուց առաջ ձեռքերը



Նկ. 9a. Ձիու գլուխը մաքրելը (անկանոն):

րով քրքրում են այնպես, վոր բոլոր մազերն առանձնաձև իրարից: Ճիշտ այդպես քրքրում են նաև մազափունջը: Բաշը քրքրում են աստիճանաբար՝ սկսելով մեղավից մինչև ականջները (նկ. 10):

Դրա համար բաշի մասը վերցնում են ձախ ձեռքի մեծ մատով և ցուցամատով և հետզհետե մի քանի մազեր միասին տրվում են ձախ ձեռքից աջին: Ըստ այնմ մազերն անջատում են իրարից մինչև նրանց արմատները և աջ ձեռքի լայն բացած մատներով ուղղում են, կարծես սանրում են: Դրանից հետո սկսում են մաքրել բաշը խողանակով՝ սեղմելով վերևից ներքև, ըստ վորում խողանակին ուղղվում և խողանակի փոկի տակ գտնվող ձեռքի յերկայնքով և վոչ թե լայնքով:



Նկ. 10. Բաօր Բանդելը (հրեելը):

ներով աջից ձախ: Սովորաբար չի հաջողվում խողանակով մաքրել պոչը մինչև հիմքը, դրա համար ել թաց մահուզով մաքրում են մազերի միջի բազուկները (մազարածան) սկզբում պոչի հիմքի մոտ, իսկ հետո՝ ավելի ներքև:

Արգելվում է խուզել բաշը. պոչի մազերը կտրում են թուխբահողից մի ավել բաշը: Մի քանի ղեպքերում բաշը և պոչը կարելի չե փետել: Սակայն այդ կարելի չե անել միայն դասակի հրամանատարի թույլտվությամբ և ցուցումով:

Հովատակների և ամորձատված (կուրա) ձիերի կաշին սեռական օրգանների մոտ գատում և մի առանձին մածուցիկ հեղուկ, վորը խառնվելով կեղտի և մեղի մնացորդների հետ, կարող է առաջ բերել կաշվի գրգռում: Ուստի այդ տեղերում կաշին լվանում են ջրով և մաքրում մահուզով: Ձիու հետանցքը նույնպես լվանում են ջրով և մաքրում մահուզով:

Պետք է շարունակ հետևել, վոր կոճի ցակը մաքուր չեվ չար լինի: Ձիու փոտները կեղտոտ և խոնավ պահելուց կաշին կոճի

տակ ձաքձքվում է, մանավանդ հետևի փոտների վրա, և այդ տեղերում առաջանում է վերք (սրբանախոց): Ուստի ձիու փոտների ներքևի մասը մաքրում են խողանակով կամ լվանում են ջրով, իսկ հետո բոլորովին մաքրում-չորացնում են մահուզով:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԼՈՂԱՅՆԵԼ ՅԵՎ ԼՎԱՆԱԼ ՁԻՈՒՆ

Բացի մաքրելուց, ձիու կաշին մաքրելու և նրան թարմացնելու լավ միջոց են հանդիսանում լողանալն ու լվանալը: Լողացնում են տարվա տաք ժամանակ, իսկ լվանում են ամեն ժամանակ այն պայմանով, վոր լինի տաք արևոտ, վորտեղ ձին կարողանա ամեն կողմից չորանալ լվանալուց հետո:

Լողանալու ժամանակ պետք է հետևել այս կանոններին: Չուրը չափազանց սառը չպետք է լինի: Լողանալու տեղը ձին տանում են քաշելով կամ վրան նստած՝ քայլելով: Ձին չի կարելի յերկար թողնել ջրի մեջ, լողացնել տաքացած և քրտնած ձիերին կամ լողացնել քամի և ցուրտ յեղանակին չի թույլատրվում: Այդ կանոններն անտես առնելը կարող է պատճառ դառնալ մրսելուց առաջացող հիվանդությունների:

Բոլոր ղեպքերում ձիերի լողանալն ու լվացումը կատարվում է դասակի հրամանատարի թույլտվությամբ:

Լողանալու լավագույն ժամանակը յերեկոն է, կեր տալուց մի ժամ առաջ: Լողանալու համար ընտրած տեղերը պետք է ունենան ամուր դետին և թեթև զարբվայք ավի:

Լողանալիս ձին սկզբում մոցնում են ջրի մեջ մինչև փորը, թրջում են գլուխն ու պարանոցը և լվանում են մեջքը: Դրանից հետո կարելի չե բաց թողնել, վոր ձին լող տա: Լող տալու և լվանալու ժամանակ պետք է հետևել, վոր Չուրը չլցվի ձիու ականջները, այդ վայրերում և անհանգստություն և պատճառում ձիուն: Լողանալուց հետո ձեռքով քամում են Չուրը ձիու մազերից:

ՊՈՅՏԵԼԸ ՅԵՎ ՍՄԲԱԿՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Առանձնապես կարևոր նշանակություն ունի պայտելը և սմբակները խնամքը: Յեվ այդ հասկանալի չե: Պայտելը պաշտպանում է սմբակները մաշվելուց և կոտրտվելուց, մանավանդ ամուր դետնի վրա աշխատելիս և սառուկի (ГОЛОЛЕДИЦА) ժամանակ սայ-

Թաքելիս (յերբ պայտուճ էն սեպերով): Բացի զբանից, պայտուճով կարելի յի ուղղել անկանոն և հիվանդ սմբակը: Անկանոն և աչքաթող արած պայտուճից և վատ խնամքից սմբակն ընդունում է անկանոն ձև, սմբակի յեղջերանյութը կոտրվում է, առաջանում են սմբակիների և վտտի ներքևի մասի հիվանդություններ և ձին կարող է կաղալ ու զուրս դալ շարքից: Յեթն ձին յերկար ժամանակ չի պայտվում, այդ դեպքում ձիու վտտի ներքևի մասն ընդունում է անկանոն ուղղություն: Այդ կարող է կաղուժյուն առաջացնել: Ուստի ձիուն նորից պայտում են՝ վոչ պակաս քան 40 սրը մի անգամ:

Սմբակի ներբանին կպած կեղան ու ազրը մաքրում են փայտե դանակով (նկ. 11) կամ յերկաթի բուժ կեռիկով: Յերկաթյա կեռիկի հակառակ ծայրում կարելի յի շինել բանալի պայտի սեպերը քանդելու (յետ պտուտակելու) կամ պնդացնելու համար: Ներբանի կեղտը մաքրելու համար չի կարելի գործածել սուր առարկաներ (մեխեր, սուր կեռիկներ), վորովհետև զրանք ներբանը կարող են վիրավորել: Մաքրելուց հետո ներբանը



Նկ. 11. Սմբակի ներբանի մաքրելը:

և սմբակի պատը լվանում են ջրով: Սմբակները ջրով լվանալը պահպանում է նրանց չորանալուց: Սմբակին դանազան յուղեր և ձյութ չպետք է քսել, վորովհետև նրանք վատ ազդեցություն են ունենում սմբակի վրա: Բացի զբանից, յուղ քսած սմբակի վրա նստում է փոշի և կեղտ, իսկ այդ նպաստում է սմբակի յեղջերանյութի քայքայմանը:

Պայտի անկանոնությունը և սմբակների հիվանդությունը իր ժամանակին հայտարարելու և կանխելու համար կարմիր բանակայինը ձին մաքրելու ժամանակ պարտավոր է ուշադրությամբ զննել սմբակները, պայտերը և սեպերը: Նա պետք է ըս-

տուզի՝ չի կոտրվել արդյոք պայտը, չի շարժվում այն, չեն կոտրվել պայտի վրայի սեպերը, չի կորցրել ձին սեպերը, ամուր են նստած սեպերը պայտի մեջ, չի կպչում պայտը մյուս վտտին՝ ձիու շարժումների ժամանակ, չկան վիրավորված տեղեր (վտտահարք) սմբակի մոտ, քարի կտորներ չեն ընկել պայտի և սմբակի միջև, չեն մնացել սմբակի ներբանի մեջ մեխեր, ապակի կամ յերկաթի կտորներ: Կոտրված սեպերը հանում են և փոխարինում նորերով: Սմբակի ներբանի մեջ մնացած սուր առարկաները պետք է հանել, իսկ ձին տանել հետազոտության՝ անասնաբուժի կամ անասնաբուժակի մոտ:

Պայտելու բոլոր անկանոնությունների մասին կարմիր բանակայինը գեկուցում է իր հրամանատարին:

ՁԻՆԻՆ ԱՆՈՌՈՒՄ ՊՍՂԵԼՈՒ ԿՍՆՈՆՆԵՐԸ

Ախոռը պաշտպանում է ձիերին վատ յեղանակից ու ցրտից և ծառայում է նրանց համար վորպես հանգստի տեղ աշխատանքից հետո: Ուստի ախոռը պետք է տա ձիերին հանգստանալու բոլոր անհրաժեշտ պայմանները (նկ. 12):

Ախոռը պետք է լինի մաքուր, լայնարձակ և տաք (5° ջերմությունից վոչ պակաս): Չպետք է մոռանալ, վոր կեղտոտ, վատ ողափոխվող ախոռը կարող է ծառայել վորպես բուժ դանազան վարակիչ հիվանդություններին: Դրա համար ել ավելի հաճախ են վաքրում ախոռի հատակը և իսկույն զուրս են տանում ձիու մաքրում ախոռի հատակը և իսկույն զուրս են մեղրն ու մեղր, առանց կանգնած տեղից և ձիակապարանից գոմաղբն ու մեղր, առանց սպասելու, վոր նրանք կուտակվեն շատանան: Ազրը զուրս են տանում և դարսում են առանձին տեղում, ախոռից հեռու: Ախոռի մոտ դարսած ազրը հրապուրում է ճանճերին, վորոնք վոչ միայն անհանգստացնում են ձիերին, այլև տարածում են վարակիչ հիվանդությունները: Բացի ախոռն ամեն ոք կարգի բերելուց, անհրաժեշտ է վեցորչակում մի անգամ ավելի-մաքրել պալուց, կամ ավելի լավ է թաց ջնջոցով շփել պատերը, առատապն տերը կամ ավելի լավ է թաց ջնջոցով շփել պատերը, առատապն ու կերարկղները և մաքրել փոշին, սարդոստայնը և խոտի մանուկերարկղները և մաքրել փոշին, սարդոստայնը և խոտի մանուկերը: Ըստ վորում ձիերին նախապես պետք է զուրս հանել ախոռից և բաց անել ախոռի պատուհաններն ու դռները:

Առանձին ուշադրություն են դարձնում են դանազան ախոռի ողափոխման ախոռը: Դրա համար շինում են դանազան ախոռի կանոնափոխական խողովակներ: Ողափոխական հարմարանքների կանոնա-

Վորությանն ու սղափոխության անցքերը ժամանակին բացելուն
ու փակելուն պետք է շարունակ հետևել: Բացի դրանից, յեթե
յեղանակը թույլ է տալիս, պետք է ավելի հաճախ բացել արտօր
պատուհաններն ու դռները:

Պետք է չմոռանալ, վոր արտուում գտնվող ձին այնուամե-
նայնիվ չի սնանուում բավարար չափով արևի լույս, թարմ ոդ և
ազատ տարածություն, ուստի անհրաժեշտ է վորքան կարելի յե
հաճախ պահել ձիերին ձիակապարանում:

Մշտական ձիակապարանը շինուում են յերկաթակապ զերան-
ներից, ուղիներից կամ յերկաթյա խողովակներից: Յերբեմն նրանց
հարմարեցուում-կցուում են կերարկղներ կամ ցանցեր՝ խոտ տա-
լու համար: Այն դիսավոր պահանջը, վոր դնուում են ձիակապա-
րանի նկատմամբ, այն է, վոր նա չունենա սուր ցցվածքներ,
ծայրեր և մի կողմ ընկած յերկաթի կտորներ, վորպեսզի ձիերը
վերքեր չստանան: Ձիակապարանների վրայից ելեկարահարողիչ
չպետք է անցկացնել: Ձիակապարանուում պետք է լինի անպայ-
ման մաքրություն և չպետք է թողնել, վոր կեղտ ու մեղ կու-
տակվի:

Ճամբարային պայմաններուում շինուում են ծածկեր (навес)
մշտական ձիակապարաններով կամ արտօր ընդհանուր արտօր,
կերարկղներով: Այդ տեսակ ծածկերը պաշտպանուում են ձիերին
անձրևից և շոգից, իսկ յեթե կան կողքի վահաններ՝ նաև քամուց:


Յերեկը ձիերին կարճ են կապուում, վորպեսզի նրանք չկա-
րողանան հող ուտել կամ վտաքը գցել կապի մեղ: Յերեկոյան
մաքրելուց և կերակրելուց հետո կապը յերկարացնուում են այն-
քան, վոր ձին կարողանա ազատ պտուկել և ձգել պարանոցը
(գլուխը դնել):

Յերեկոյան մաքրելու ժամանակ ձիու կանգներու տեղուում
փոոց են փոուում:

Վերջին անգամ խոտ պետք է տալ ժամի 23-ից վոչ ուշ:
Դիշերվա հանդստի ժամանակ անհրաժեշտ է վերջացնել բոլոր աշ-
խատանքներն արտուում ձիերին շանհանգստացնելու համար:

Տարվա առանձնապես ցուրտ ժամանակը և սառն արտոնե-
րուում ձիերին (հրամանատարի ցուցմուներով) ծածկուում են տապ-
ակով (попона):

Արտուում, ձիակապարանուում կամ ծածկի տակ գտնվող ձիերին
հետևելու համար սահմանուում են խիստ հսկողություն (հերթա-
պահություն): Հերթապահը պարտավոր է հսկել, վոր արտուում



Նվ. 12. Ձիերին արտուում տեղավորելը:

կարգ լինի—ձիերի վտանքերի տակից հավաքեն թափված խտոր, ձիերը կապից դուրս չզան, վտորքերը չզցեն կապերի մեջ: Ձիերի հիվանդությունների դեպքում հերթապահն անմիջապես զեկուցում է ախտի որսպահին:

Հրդեհի դեպքում առաջին հերթին դուրս են հանում ձիերին և հետո միայն փրկում են մնացած գույքը: Առանձին շապոցապահանությունները կտրտում են ձիերի կապերը: Պախուղաները կտրում են դանակով կամ դեն են նետում և ձիերին դուրս քշում ախտից: Համառոտ և դուրս գալ չցանկացող ձիերի գլուխը ծածկում են տալբաններով կամ տապակով, վարպետը նրանց աչքերը փակեն: Ախտի մոտեքում հրդեհի ժամանակ նպատակահարմար է նվազել հավաքի ազդանշան:

ԻՆՉՊԵՏ ՏԵՂԱՐԿԵԼ ՅԵՎ ՊԱՀՊՈՆԵԼ ՁԻՈՒ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ

Ձին թամբելուց կամ լծելուց առաջ ուշի-ուշով ստուգում և գնում են ձիու հարդարանքը (թամբ, սանձ, լծասարք):

Ձիու հարդարանքը — թամբը, լծասարքը — այնպես լավ պետք է տեղարկված լինի, վոր չնեղի ձիու շնչառությունը խամոտ-անուր և շարժումները, քերվածքներ և ֆլասավածքներ չպատճառի նրան: Ձիու ամբողջ հարդարանքը պետք է լինի կատարելապես լավ վիճակում: Պետք է հիշել, վոր հարդարանքի լավ վիճակում գտնվելուց է կախված ձիու առողջությունը: Յեթև որինակ, քրքուղի է կախված ձիու առողջությունը: Յեթև որինակ, քրքուղի է կախված ձիու առողջությունը: Յեթև որինակ, քրքուղի է կախված ձիու առողջությունը: Յեթև որինակ, քրքուղի է կախված ձիու առողջությունը:

Ձին թամբում և լծում են վորոշ կարգով:


Թամբելուց առաջ սանձն են գնում: Սանձը զույգն անցկացնելով՝ ամենից առաջ ուշադրություն են դարձնում այն բանի վրա, թե յերկաթն ինչպես է ընկել բերանը և, յերկարացնելով կամ կարճացնելով գլխի փոկը, կանոնավոր կերպով տեղարկում են լիամբ: Կանոնավորապես տեղարկած լիամբ պետք է ընկած լինի ներքին ծնոտի անատամ ծայրերի վրա, լեզվից բարձր և միայն թեթևորեն կոչի ձիու բերանի անկյուններին: Յեթև լիամբ շատ ցած և զցած, այդ դեպքում կշարժվի բերանում, և ձին վատ սովորություն ձևը կրերի, այն է՝ լեզուն դուրս կձգի լիամբ

վրայից, լիամբ ցավացնում է ծնոտի անատամ ծայրերը, վորովհետև լեզուն հաստ լինելու հանգամանքը չի մեղմացնում նրա ազդեցությունը: ձին կոթնում է լիամբն, անհանգստանում է և չի հնազանդվում սանձին:

Յեթև լիամբ սաստիկ ձգված է, նա վեր է քաշում շրթունքները անկյունները, ձին նույնպես սկսում է անհանգստանալ, համակ է աշխատում և ազատվել լիամբից:

Յեթև արդեն լիամբ տեղարկված է, ուշադրություն են դարձնում քթափոկի վրա, վորն այնքան պետք է ազատ լինի, վոր չխանդարի ձիուն բերանը բացելու: Բայց քթափոկը չափազանց ազատ ել չպետք է լինի և չպետք է քաշ դա: Ճարմանդի միջոցով կարճացնելով կամ յերկարացնելով քթափոկը՝ բաց են թողնում այն այնպիսի յերկարություն, վոր նրա և ձիու գնչի միջով ազատ կարողանան անցնել տափակ զրված ձևքի 3 — 4 մատները:

Ճակատի փոկը պետք է ընկած լինի ձիու ճակատին՝ առանց տկանջներին դիպչելու (նկ. 13):



Նկ. 13. Սանձի տեղադրումը:

Կզակի փոկը չպետք է սաստիկ ձգել, նա պետք է ազատ տեղարկված լինի:

Թամբը դրաստարեժով պետք է կանոնավոր սարքել, ըստ վորում բռններն աջ և ձախ կողմից հավասար ծանրություն պետք է ունենան:

Սազազ ժամանակ ընդունված է թամբելու 2 ձև՝ վարժական և արշավային:

Վարժական քամվածք կազմում

են՝ թամբը բրանաբաշի կախարիչով, առանց կրծքակալի և հակերի, և զլխանոց՝ պախուրցի թոկով:

Արշավային քամվածք կազմում են՝ թամբը լրիվ բեռով (բոլոր պարագաներով) և զլխափոկը (ОГОЛОВЪЕ) պախուրցի թոկով:

Պատերազմի ժամանակ սահմանված է արշավային թամբվածք, այսինքն թամբը լրիվ բեռով և բոլոր պարագաներով, ամբաշինություն գործիքով, ձիու հակազգով, 2 քրանաքաշով, գլխափոկով և պախուրցի թոկով:

Թամբի առջևի բեռը կազմում են՝ վարսակի քսակը, պատյանները, շինելը, ձիու հակազաղը և բահը՝ (պատյանով: Գտակները ղետեղվում են պատյանների մեջ, վորտեղ պնդացնում են լծված փոկերով:

Ձիու հակազաղն իր պատյանով ամրացնում են առջևի հակին աջ կողմից, դաշի մեջտեղի մոտ, շինելի վրայից:

Հետևի բեռը կազմում են 2 խուրջին, տապճակը թամբակալի և ջուր խմելու գուլլի հետ, և կախասն: Խուրջինի մեջ տեղավորում են հետևյալ իրերը:

Ձախ պարիում այն, ինչ վոր ամենից առաջ վերաբերում է ձիուն. ա) խուսի ցանցը, բ) ձիու խողանակը, գ) կաշվի պարկով քերիչը, դ) ձիու տոպրակը, յե) ախոսի պախուրցը, զ) ձիատաքքի կամ կոշիկի խողանակ, և) առջևի վտանների մի գուլլ պայտ 16 մխով:

Բացի դրանից, անհրաժեշտություն գեպքում ձախ պարիում տեղավորում են լրացուցիչ փամփուշաներ:

Աջ պարիում գնում են այն, ինչ վոր վերաբերում է մարտիկին (սպիտակեղեն, պարեն, լվացվելու պարագաներ, թելասեղ և այլն):

Բեռները տեղադրելիս առանձին ուշադրություն պետք է դարձնել շինելի (առջևի բեռ) և տապճակի (հետևի բեռ) կապելու վրա, վորովհետև նրանց անկանոն կապելը կարող և վերք առաջացնել մեղավի ու գոտակասեղի վրա:

Ծաված շինելը գնում են դաշի առջևից և պատյանների վերեվից այնպես, վոր նա ծածկի նրանց. ներսի կողմից (հեծվորի կողմից) քնդհուպ մինչև քրտնաքաշի կափարիչը, ըստ վորում շինելի ծալքերը դարձած պետք է լինեն գեպի հեծվորը: Կապած շինելի ծալքերը պետք է հավասարվեն քրտնաքաշի կափարիչի ներքևի ծալքերին:

Վորտած տապճակը մեջտեղում պետք է ունենա սեղմած սեղ՝ իր հաստությունը յերկու անգամ պակաս տրամագիծ ունեցող, քան վորտած տապճակի ծալքերի հաստությունն է: Տապճակի ծալքը պիտի ուղղված լինի գեպի դաշը: Տապճակը գրվում է հետևի դաշի քամակին:

Վարսակի պարիերը պետք է ամուր կապվեն, վոր վարսակը չթափվի և շարժվելու ժամանակ չընկնի թամբի տակ. այդ կարող է քերոց առաջացնել:

Առջևի և հետևի բեռներն ամրացվում են բեռնափոկերով: Յերկու բեռների միջին բեռնափոկերի ճարմանդները (չափաաստ) պետք է ընկնեն հակի վերեում, այլապես չափաաստները կարող են ընկնել տապճակի կամ շինելի տակ և վիրավորել ձիու մեջքը:

Թամբը պետք է պինդ կպած լինի ձիու մեջքին: Առջևի դաշը պետք է ընկած լինի մեղավի մեջտեղում:

Առանձին ուշադրություն են դարձնում քրտնաքաշերի կանոնավորություն վրա, վորոնք կպած են լինում անմիջապես մեջքին և մի վորևե անկանոնություն գեպքում կարող են առաջացնել մեղավի և մեջքի արորումներ ու քերումներ: Ուստի թամբը ձիու մեջքին գնելուց առաջ, ամբողջ քրտնաքաշը հարկավոր է շոշափել մատներով և համոզվել՝ չկան արդյոք ծալքեր, թաղիքի գնդեր, փայտի կտորտանք, վարսակի հատիկներ, փշեր և այլն: Թաղիքի գնդերը կարելի չե ճմել (կարելի չե այդ գեպքում տըրորել), ծալքերը հարթել, իսկ բոլոր կողմակի առարկաները հեռացնել, ծալքահեղ գեպքում պետք է գեկուցել իր հրամանատարին՝ քրտնաքաշը փոխելու մասին:

Շփվելով ձիու կաշվի հետ՝ քրտնաքաշը հեշտությունը ջրակալվում է, կորցնում է առաձգականությունը, դառնում է կարծր, ճնշում և քերում է ձիու մեջքը: Գրտնաքաշը չորացնելու համար թամբերը գրվում են՝ քրտնաքաշը յերեսնիվեր: Մի քանի հեծելաթամբերը գրվում են՝ քրտնաքաշը մեքենաներ: Ամառն ավելի լավ մասերում կան թամբ չորացնող մեքենաներ: Մաշտում անձրևվային յեղանակին վիշերելու ժամանակ պետք է թամբերը ծածկել բերդենտով, վոր նրանք չթրջվեն անձրևի տակ:

Քրտնաքաշի կափարիչը և քրտնաքաշերն այնպես են սարքում, վոր ձին շարժվելիս քրտնաքաշը չկնճոտովի, մի կողմ չընկնի և ձիու մեջքն ու մաշավը չտորի: Թամբի և ձիու վողնաշարի միջև անպատճառ պետք է տարածություն թողնել, վոր ողն ազատ ներս մտնի:

Թամբը ձիու վրա տեղավորում են ըստ մազերի ուղղություն (տանելով պարանոցի կողմից), և վոչ թե մազերի ուղղություն հակասակ:

Փորքաշները պիտի լինեն կակուղ, վորպեսզի նրանք չչորանան և չկարծրանան, պետք է մաքուր պահել և ժամանակին ճարպ քսել նրանց:

Փորքաշները չպետք է ձգել միանշամից, այլ աստիճանաբար, մերթ առջևինը, մերթ հետևինը, միշտ սկսելով առջևի փորքաշից:

Առջևի փորքաշը պետք է անցնի ձիու մարմնի տակով, մոտավորապես մի ափ հեռավորությունը առջևի վտաններից, և ձգվի


այնպես, վոր ձիու վրա նստելիս թամբն իր տեղից չծովի:

Հետևի փորքաշը ձգվում է ավելի թույլ, քան առջևինը, վորպեսզի ձիու շնչառությունը չդժվարանա:

Առջևի լավ ձգված փորքաշերի տակ գծվարությամբ կարելի չէ մտցնել մի մատ, իսկ հետևի փորքաշների տակ՝ 2—3 մատ:

Յեթև ձիու կաշին փորքաշների տակ ծալքեր է առաջացնում, այդ ծալքերն անպատճառ պետք է շակել:

Լծասարքը ձիու վրա պետք է տեղադրել հետևյալ ձևով (նկ. 14):



Նկ 14. Յեթևի լծված:

Գլխափակի յերկարությունն այնպես պետք է լինի, վոր լիամն ընկնի բերանում՝ լնդերքի անստամ ծայրում, բերանի անկյուններից քիչ ներքև: Շրթուները ձգել վոր մի դեպքում չի թույլատրվում:

Լկամբ գոգավոր կողմերով գարձած է լինում գեպի ներքևի ծնոտը:

Ճակատփակն ընկած պետք է լինի ձիու ախանջներից ցած և չպետք է խանգարի նրանց: Մագափուռնը հանում են ճակատափակի տակից:

Ցուկակալը և շրթնակալն ազատ պետք է լինեն:

Կշակի փակն այնքան ազատ է ձգվում, վոր նրա տակով անցնում է յերեք մատ ուղիղ պարզամ:

Խամուրը լծասարքի հիմնական մասն է և ծառայում է բե-

տան քարշը ձիու մեջքին փոխանցելու համար: Շարժական կոնստրուկցիայի խամութներն ունեն 2 համար՝ № 1-ը՝ մեծ, և № 2-ը՝ փոքր: Շնորհիվ յերկաթե աղեղի և պահանջների, խամութի այդ համարների յուրաքանչյուրի չափը կարելի չէ փոխել ըստ յերկայնքի և ըստ լայնքի, վորով հնարավոր է դառնում խամութը հարմարեցնել համարյա ամեն ձիու:

Խամութի վերին մասը պետք է ընկած լինի մնդավի առաջից, պարանոցի սանրի մեջ յեղած փորքի մեջ, առանց ամուր կպչելու պարանոցի սանրին՝ տրորումից խուսափելու համար: Պարանոցի սանրի և խամութի տակդիրների միջև պետք է լինի յերկու մատ տարածություն: Չիու ազատ կանգնած ժամանակ պարանոցի առջևի մասի և կլտախամութի կիսանուր, արանքով պետք է անցնի ձեռքի բացած ափը:

Շրջափակն այնպես պետք է սարքել, վոր նա չնեղացնի ձիու հետևի վտանների շարժումները: Ողագտու փակի տակով, նըստատեղու բլրակների մոտ, պետք է կարողանա անցնել բաց արած ձեռքի ափը:

Կրծքափուկը կեռիկներով ամրացնում են խամութի բլթակներին:

Ագեկալը միացնում է կրկնափուկը ողակին, կոճկած ձևով նա, պիտի ունենա այնչափ յերկարություն, վոր քեղին գտնվի համարյա հարիզոնական դրությամբ կամ քիչ թեքվի դեպի սայլակը:

Միամի լծվածում քամբը ֆրսնախաթի հետ լինում են այնպիս, վոր նրա առջևի ծայրը 2—2,5 սանտիմետր հեռու լինի մնդավից: Թամբի բրտնաքաշը պետք է լինի կակուղ և չոր, առանց ծալքերի, կոշտացած տեղերի և կողմնակի առարկաների: Թամբը քրտնաքաշի հետ դնում են մնդավի վրա և ձգում են մազերի ուղղությամբ դեպի յետ:

Թամբամիջի փակն անց են հացնում թամբի վրայի թամբաղեղի կանթի և թամբի վրայի թարեքի հանգույցների միջով: Այդ անհրաժեշտ է այն նպատակով, վոր իջնելու համար կատարվող շարժման ժամանակ թամբը չընկնի ձիու մնդավի վրա:

Թամբամիջի փուկն այնպես պետք է ձգել, վոր խամութը չսեղմի ձիու կողմերը:

Վերելքների ժամանակ թամբամիջի փուկը թուլացնում են, վորպեսզի ձիու շնչառությունը չդժվարանա:

Փաթի ցակի փակը, վոր կազմում է թամբամիջի փուկի մի մասը և անցնում ձիու փորի տակով, ձգվում է ազատ, վոր կարելի լինի անցկացնել յերկու մատ՝ կողք-կողքի դրած: Այդ գեպ-

Իջնելու, մանավանդ ուժեղ զառիվայրից իջնելու ժամանակ ձին իր ծանրութեան կենտրոնը տեղափոխուած է մարմնի հետեւի մասը: Մարտիկն իր նստվածքով պետք է նպաստի այդ նոր հասարակչութեանը, ուստի իր մարմնի վերեւի մասը գոտկատեղից սկսած յետ է ձգուած. մարմնի միջին մասը և սրունքները մնում են իրենց տեղը: Սրունքները ամուր սեղմվում են թամբին. ձին պետք է թեթեւ կերպով պահել սանձով: Վորքան ուժեղ և զառիվայրը, այնքան մեծ է մարմնի թեքվածքը գոտկատեղից դեպի յետ:

Կարճ ուժեղ զառիվերերը և զառիվայրերն անցնում են ուղիղ: Կարճ ուժեղ վերելքն անցնում են այնքան արագ, վորքան զառիթափ և վերելքը: Յերկար վերելքներն ու զառիվայրերն անցնում են քայլով:

Ըստ այսմ թեք զառիթափերում ձին պետք է տանել շեղակի, դիզպագներով կամ ոճապատույտ, իսկ իջնելիս՝ ուղիղ:

Խճուղիներով և առհասարակ պինդ ճանապարհներով՝ պետք է շարժվել զլիսավորապես ճանապարհների յեղբերով:

Վարելանողերում, անհարթ տեղերում, այլ և խորտուբորտ կամ մացառապատ վայրերում պետք է իուսափել ձին արագ քշելուց (յեթե հանգամանքները չեն պահանջում այդ):

Խրուտ, ճահճոտ տեղով անցնելիս ձին քշում են մեծ մասամբ քայլով, ըստ վորում բռնում են բաշից և բարձրանալով ծնկների վրա՝ ասպանդակում. մարտիկն առաջ է դրում իր իրանը, իսկ յեթե ձին սկսում է խրվել, իջնում է ձիուց և տանում է՝ սանձից քաշելով:

Սառցի վրայով կամ սայթաքուն ճանապարհներով անցնելիս ձիերին քշում են քայլով, սրունքներով և սանձով, խուսափելով ուժեղ և կարուկ շրջադարձերից:

Չիու ուժը շարժման ժամանակ պահպանելու համար մեծ նշանակություն ունի քայլվածքի հերթագայութունը:

Ամենից նպատակահարմար են քայլվածքների հետևյալ զուգակցումները.

— 1 կիրումետր-քայլով (10 բուպե) և 1 կիրումետր վարգով (5 բուպե):

— 1 կիրումետր քայլով (10 բուպե) և 2 կիրումետր վարգով (10 բուպե):

Նորմալ չվերթի ժամանակ (50 կիրումետր) սովորական պայմաններում մի ժամում միջին արագութունը կազմում է ջրաբրի ճանապարհի փոքրիկ դադարների հետ միասին և այլն, այլ և անխուսափելի արգելքներն ինկատի առած, վորոնք կապված են

վերելքներն ու վայրելքները հաղթանարելու հետ, 6 — 7 կիրումետր:

Յերբ արշավային գորսայունը շարժվում է վոչ պակաս քան կես չվերթի տարածութունը (20 — 25 կիրումետր), շարժվելու արագութունը կարող է հասնել 8 — 9 կիրումետրի մի ժամում, իսկ ծալրահեղ անհրաժեշտութեան դեպքում, վոր առաջանում է հանգամանքներից, նույնիսկ 10 կիրումետրի: Սակայն այդ տեսակ արագութունը թույլ է արվում միմիայն բացառիկ դեպքերում և այն ել փոքր տարածութուններ անցնելիս և առանձնապես լավ ճանապարհներով: Այդ դեպքում փոփոխելի 1 կիրումետր քայլով և 3 կիրումետր վարգով են անցնում՝ առանց փոքր դադարների և առանց ձիերին ջուր տալու:

Միջին արագութունը գիշերով, անտառային վատ ճանապարհներով և այլն, չի ավելանում 4 — 5 կիրումետրից մի ժամում իսկ սարերում յերբեմն հասնում է մի ժամվա մեջ 1¹/₂ — 2 կիրումետր:

Բոլոր դեպքերում անհրաժեշտ է խստիվ կատարել քայլով և վարգով շարժվելու հետևյալ նորմաները. 1 կիրումետր քայլով — 10 բուպե, 1 կիրումետր վարգով — 5 բուպե:

Բացի դրանից, անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները. — արշավանքի սկզբում և դադարի տեղից յեղնելիս՝ անցնել քայլով մեկ կիրումետրից վոչ պակաս.

— շարժման յուրաքանչյուր 1 — 1¹/₂ ժամից հետո փոփոխակի քայլվածքով անել փոքրիկ դադար՝ 5 — 10 բուպեյով.

— մեծ դադարից և արշավանքը վերջացնելուց առաջ անցնել մի կիրումետր քայլով և մի կիրումետր քաշելով:

Չիստապարտութեան կարգի այդ տեսակ հերթականութունն սղնում է ձիու ուժի խնայողութեանը և մարտական խնդրի կատարմանը:

Բացի կանոնավոր նստվածքից և քայլվածքի հերթականութունից, ձիու ուժի խնայողութեան համար մեծ նշանակություն ունի շարժման և համգոսի հերթականութունը:

Չին արշավանքում շատ մեծ աշխատանք է կատարում. նա ուժը վատնում է վոչ միայն շարժման մեջ, այլ և տանում է հեծվորին, կամ հրանթ, կամ թե սայլակ և քաշում: Դրա համար ել վորին, կամ հրանթ, կամ թե սայլակ և քաշում: Դրա համար ել արշավանքում նշանակվում են դադարներ, վորոնք ամբողջովին պետք է ոգտադործվեն ձիու հանգստութեան համար:

Յեթե սկզբում առաջին 1¹/₂ — 2 կիրումետր պետք է անցնել քայլով, դրանից հետո անում են փոքրիկ դադար 10 բուպեյով՝ թամբվածքն ու լծատարքն ուղղելու համար: Յերթի վերջում

սուն ջուրը: Բոլորովին անպետք է խմելու համար ջրափոսերի, ճահիճների, աչքաթող արած ջրավազանների ջուրը: Այդ տեսակ ջուրը հաճախ նեխահոտ ու նեխահամ է ունենում և կարող է առաջացնել զանազան հիվանդություններ, վորոնց թվում և վարակիչ հիվանդություններ:

Գետերից և ջրամբարներից ջրելիս ընտրում են այնպիսի տեղեր, վորոնք թեք քարափ և ճահճացած, տղմոտ ափեր չունեն: Ձիերին միաժամանակ — խմրովին ջուր տալիս՝ անհրաժեշտ է հետեւել, վոր հոսանքի ներքեից խմող ձիերը խորը մտնեն ջրի մեջ, այլապես նրանք կխմեն կեղտոտ հոսանքի վերեւի մասում կանդնած ձիերի պղտորած ջուրը:

Սոր ջրի մեջ կարելի չէ թողնել ձիերին չթուլացրած վորքաշերով, իսկ յեթե գետը ծանծաղ է, վորքաշները բաց են թողնում: Լծկան ձիերին ավելի լավ է ջուր տալ դույլերից և վոչ թե թողնել, վոր նրանք լծասարքով մտնեն գետը:

Վորպես կանոն, ձիերին ջրում են արշավանքից առաջ և դադարների ժամանակ: Սակայն, առանց փասելու ձիու առողջությունը, կարելի չէ ջրել և արշավանքի ժամանակ, բայց այդ դեպքում ջրելուց հետո իսկույն պետք է շարունակել ձիու յերթը: Պետք է թողնել, վոր ձիերը խմեն ինչքան ուզում են, բացի սաստիկ տաքացած և քրանած ձիերից: Վորպեսզի քրտնած ձին ազահուծյամբ չխմի, նրա բերանից չեն հանում լկամի յերկաթը: Աղահորեն խմող ձիերին, մի քանի ումպից հետո, հեռացնում են ջրից: Դույլով ջրելու դեպքում նրա մեջ մի քիչ խոտ են պցում այն ժամանակ ձին ավելի դանդաղ է խմում:

Յեթե արշավանքի ժամանակ ջուր չեն տվել և ձին յեկել է տաքացած ու քրտնած, նրան ջուր տալուց առաջ անհրաժեշտ է սպասել մոտ 1 — 2 ժամ, մինչև վոր ձին հանգստանա և չորանա: Յերբեմն աշխատանքից հետո հոգնած, ջուր չխմած ձին խոտ չի ուտում. այդ դեպքում խոտը պետք է թրջել ջրով կամ տալ ձիուն մոտ $1\frac{1}{4}$ դույլ վոչ սառը ջուր: Սաստիկ տաքացած և քրտնած ձիերին ջրելը, մանավանդ շատ սառը ջրով, կարող է առաջացնել սմբակների ուսմատիկ բորբոքում (опой):

Պետք է հիշել, վոր ջրաբբի միջոցով շատ հեշտուծյամբ և տարափոխվում վարակիչ հիվանդությունների մեծամասնությունը: Ուստի արշավանքի ժամանակ ձիերին ջուր տալուց առաջ պետք է անպատճառ իմանալ՝ չեն յեղել արդյոք տեղական բնակչության կենդանիների մեջ վարակիչ հիվանդություններ, և պետք է ջրել

միմիայն անասնաբուժի կամ հրամանատարի թույլատվությամբ: Չպետք է ջրել ձիերին տեղական հասարակություն տաշտից կամ գուռից (ջրհորների կամ աղբյուրների մոտ), այլ պետք է ջրել միմիայն իր սեփական ջրելու դույլերով:

Այն դեպքերում, յերբ մեծ գազարը յենթադրվում է նշանակված ժամանակից ավելի կարճատև ($2\frac{1}{2}$ ժամ), դադարի վայրից 4 — 5 կիլոմետր այս կողմ, ըստ վորում պետք է ջրել մինչև վ դադարի տեղը, մնացած վերջին 2 — $2\frac{1}{2}$ կիլոմետրը պետք է անցնել ձիերին քաշերով. այդ դեպքում կարելի չէ դադարի տեղը հասնելուս պես ձիերին խոտ տալ, իսկ կես ժամից հետո՝ վարսակ, մի տացքից վոչ ավելի:

Յեթե մինչև դադարի տեղը հասնելը ճանապարհին հնար չըկա ջուր տալու ձիերին, անհրաժեշտ է վերջին 3 — 4 կիլոմետրը տանել ձիերին քաշերով, վորպեսզի նրանք մի քիչ հովանան և ցամաքեն: Այդ պայմանում ձիերին կարելի չէ ջուր տալ կես ժամից հետո և դրանից 20 — 30 բուպե անց տալ վարսակ:

Սառը տալիս անհրաժեշտ է հսկել, վոր ձին խոտը չկոխկըտի վոտներով:

Վարսակն ուտեցնում են սուպրակներից և տալիս են ձիերին այն հաշվով, վոր ձին ուտի իր յերթից մի ժամ առաջ: Յեթե ձին արշավանքի դուրս գա անմիջապես վարսակն ուտելուց հետո, այդ դեպքում վարսակը վատ կմարսվի և դրա հետևանքով ձին կարող է հիվանդանալ ծակոցներով: Սառը հարդով փոխարինելիս հարդի քանակությունը չպետք է գերազանցի $1\frac{1}{2}$ -ից, քան խոտի տացքը: Սոտի պակասությունը գեպքում կարելի չէ փոխարինել այն վարսակով, բայց որակյան վոչ ավելի քան 2 կիլոգրամ: Ձիերին չի թույլատրվում կերակրել միմիայն խոտացած կերով (առանց խոտի կամ հարդի), վորովհետև կանոնավոր մարսողություն և ստամոքսի նորմալ աշխատանքի համար անհրաժեշտ է մեծածավալ կեր:

Ձմեռը գիշերոթներում և գազարի տեղերում սեպերով պայտած ձիերին հարկավոր է ըստ հնարավորություն տեղավորել ազատ, չխոնջված: Ուժեղ սառնամանիքի դեպքում ձիերին պարբերաբար շփում են քուզով, իսկ գազարի տեղերում և գիշերոթներում ավելացնում են ծավալուն կերի (խոտի, հարդի) տացքը: Յերթերում, մանավանդ յերբ տեղի չէ ունենում այդ ամուր գրունտի վրա, պետք է ավելի հաճախ ստուգել ձիերի պայտերի սեպերը և մաշվածները փոխարինել նորերով: Պետք է հաշվի առ-

նել, վոր ձիերի բոլոր վտանքը սեպերով պայտելու հետևանքով ձմեռը սայթաքունն՝ գեանի վրա կամ ձյունի մեջ աշխատելիս առաջանում են մեծ քանակութեամբ վտանահարքեր, ուստի պետք է ավելի հաճախ գննել ձիու վերջավորությունները և վտանահարքերի առկայութեան զեպքում իսկույն դիմել անասնաբուժին կամ բժշկին: Վտանահարքերը բժշկելու համար ժամանակին միջոցներ ձեռք չառնելը հաճախ պատճառ է դառնում, վոր ձին յերկար ժամանակ շարքից դուրս է մնում: Մառցի վրայով անցնելիս անհրաժեշտ է իջնել ձիուց և տանել՝ սանձը կարճ բռնած: Հեծկան ձիերի զեսանցի համար սառուցի շերտը պետք է 10 սանտիմետրից բարակ չլինի, իսկ հրետանային և զուժակի լքծկան ձիերի համար՝ 15 — 20 սանտիմետրից վոչ բարակ:

Շոգ որերում տեղի ունեցող գործողությունների ժամանակ չվերթները սովորաբար սկսում են կամ վաղ առավոտից, կամ իրիկվանից:

Շոգ որերին ձիերին ջուր են տալիս ավելի հաճախ, բայց քիչ-քիչ, սզավելով փոքր դադարից: Ըստ հնարավորութեան պետք է ավելի հաճախ լվանալ ձիու ուռնգները, թարմացնել գլուխն ու վերջավորությունները: Յեթե ձիու շնչառությունը խիստ արագանում է և նկատվում է աչքերի ու ուռնգների լորձնոտ պայտանների խիստ կարմրացում, անհրաժեշտ է այդ զեպքում իջնել ձիուց, արձակել փորքաշնները, թրջել գլուխը սառը ջրով, ձին տանել սովորոտ տեղ և դիմել անասնաբուժի կամ անասնաբուժակի ոգնութեանը:

Այդ միջոցներին չզիմելը կարող է հասցնել արևահարութեան կամ սոթահարութեան, վորոնք հաճախ մահացու յեն լինում:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԽՆԱՄԵԼ ՁԻՈՒՆ՝ ՅԵՐԿԱԹՈՒՂՈՎ, ՋՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՎ ՅԵՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ ՆՐԱՆ ՓՈՒԱՂԻՆԻՍ

Ինչպես պեժ է բարձել ձիերին վազոններ և խնամել նրանց նոստապարհին

Ձիերին թիկունքից տանելիս և մեծ տեղափոխությունների ժամանակ յերկաթուղով, ջրային ճանապարհով և ավտոմեքենաներով են տանում:

Այդ տեղափոխությունների խնդիրներից մեկն է ժամանակի անտեսությունն ու ձիերի ուժի խնայողությունը նրանց ապա-

զա մարտական աշխատանքի համար: Ուստի մարտիկները պետք է լավ իմանան տեղափոխութեան կանոնները և ամեն միջոց գործ գնեն ձիու առողջութունը պահպանելու համար:

Տեղափոխությունը վազոնում, նավի վրա կամ ավտոմեքենաներով մի քիչ հոգնեցնում է ձիուն, վորովհետև նա գտնվում է նեղլիկ, խեղզուկ տեղերում առանց շարժումներ անելու և աշխատելու: Իրա համար ել ձիերը տեղափոխութեան ժամանակ մեծ հոգատարություն են պահանջում:

Ձիերին տեղափոխելու համար նշանակված վազոնները պետք է մաքուր լինեն: Հատակի և պատերի վրա յեղած մեխերը հանում են, վորպեսզի ձիերը չվիրավորեն իրենց: Ձիերի բեռնավորումը կատարում են կամրջիկների ոգնութեամբ: Այդ կամրջիկները պետք է լինեն կանոնավոր և ամուր կցված վազոնին, վոր ձին չսայթաքի, և նրա վտանքը չընկնեն կամրջիկների և վազոնի արանքը: Վազոնում մի գուռը ընդհուպ մոտեցնում են կամրջիկին, իսկ հակառակ կողմի գուռը փակում են, վոր ձին չկարողանա դուրս ցատկել վազոնից:


Բարձելուց առաջ ձիերը և մարդիկ շարվում են վազոնի առաջ, հետո վերցնում են ձիերի վրայից թամբերը կամ հանում են լծասարքը:

Ձիերին մտցնում են վազոն կամրջիկների վրայով, իրար հետևից, կարճ բռնած: Ձիերի գլուխներն իջեցնում են այնքան, վոր գլուխները չզիպչեն վազոնի գոտան դրանդի վերին զերանին: Վորպես կանոն, սկզբում վազոն են մտցնում ավելի համարձակ և հանդիստ ձիու: Վորպեսզի ձիերն ավելի համարձակ գնան և չցատկեն կամրջիկների վրայից, կամրջիկների կողքից կանգնում են 1 — 2-ական կարմիր բանակային: Ձիերին բեռնելիս պետք է լուրթյուն պահպանել, վորովհետև ձայնն ու աղմուկը վախեցնում են նրանց: Անհանդիստ և ընդդիմացող ձիերին ոգտակար է ձեռքով խոտ տալ, հանգստացնել նրանց սովորական կոչով, վորին նրանք ընտելացած են, այդ իսկ նպատակով կարելի չէ կամրջիկների վրա մի քիչ խոտ կամ հարդ շաղ տալ: Յեթե ձին շատ է ընդդիմադրում, կարելի չէ փակել նրա աչքերը տալ՝ ձեռքով կամ սոպրակով, վոր զցում են գլխին, կամ շուռ տալ՝ գաճակով զեպի գուռը, և աստիճանաբար յետ տալով՝ մտցնել վազոն: Առաջին չորս ձիերին բեռ բարձելուց հետո վազոնի մի կողմում այդ ձիերի առջևից դնում են պինդ, լայն տախտակ (փամոց): Այդ փակոցից կապում են ձիերին չումբուրներով կամ

Յերկար տարածությունն ձիերին տեղափոխելիս նավամբարներում գոյանում և խեղդուկ ծանր ոդ, վորը շատ փասակար և անդրադառնում ձիերի ատոցություն վրա: Ուստի ուշադրություն պետք և հետևել ոգահանիչ խողովակների կանոնավորությունը՝ փչացած ոդը հանելու և թարմ ոդի հոսանք ստանալու համար:

Ձիերին նավում խմելու ջրով ապահովելու համար, պետք յեղած չափով պաշար և վերցվում: Վարսակ տալիս են որական 3 անգամ կրճատ չափով: Խոտ տալիս են որվա ընթացքում մի քանի անգամ (8 — 10 անգամ):

Ինչպես պեժ և խնամել ձիուն ավստմեքենաներով սեղափոխելիս Ավտոմեքենաներով ձիերը փոխադրում են այն ժամանակ, յերբ անհրաժեշտ և արագ փոխադրել: Այդ նպատակի համար բեռնատար ավտոներին շինում են հանվող կամրջիկներ, իսկ կող-



Նկ. 15. Ձիերի փոխադրությունը ավստմեքենայով:

քերի յեզրերում հարմարեցնում են հանվող միջնորմներ, վորոնք ամրացվում են յեզրերի վերևից: Մեքենայի կողովի լայնքով առջևից և հետևից ամրացնում են մի-մի ամուր պահանգ հաստ տախտակից, նույնպիսի միջնորմ ամրացնում են կողովի յերկայնքով: Հիվանդ կամ վերավորված ձիերին փոխադրելիս այդ պահանգներին միացնում են ձիուն հազցրած հատուկ լանջափոկի

կապերը, վորպեսզի ձիերը վայր չընկնեն և ավելի քիչ անհանգրստանան մեքենայի շարժման և հրոցների ժամանակ (Նկ. 15):

Սովորաբար յուրաքանչյուր բեռնակիր ավտոյով փոխադրում են 2 — 3 ձի: Ձիերին մտցնում են ավտո կամրջիկներով կողովի հետևի կամ կողքի մասով: Ձիերի հետ միասին մեքենան և մընում մարտիկը, յեթև հնարավոր և, նա, վորը խնամում և ձիերին:

Յեթև ձին իրեն անհանգիստ և պահում, մարտիկը հանգրստացնում և նրան ձայնով, շոյելով, ձեռքով խոտ և տալիս և այլն: Կողովի հատակին հարզ են դնում: Հետո ստուգում են մեքենայի յեզրերի և հատակի կանոնավորությունն ու ամրությունը, ձիու խնամքի առարկաները (ջուր տալու դույրը, տապալակը, խողանակը, քերիչը և այլն): Իրանից հետո կամրջիկները վերցնում են (մեքենայի յերկար յեզրի վրա կամ կողովի տակը), հետևի յեզրը ամուր փակում են, իսկ մարտիկը կանգնում և ձիերի առաջ և հանգստացնում և նրանց:

Ճանապարհին շոփերները պետք և խուսափեն կարուկ կերպով մեքենան արգելակելուց և հրոցներից, մանավանդ վատ ճանապարհների վրա:

Յուրա և քամոտ յեղանակին պետք և ձիերին ծածկել տապալակով:

ՁԻՈՒ ՎԱՏ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԱՏՆԵՐԸ ՅԵՎ ՆԲԱՆՅ ԴԵՄ ՊԱՅԳԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Վատ սովորությունները (խրտնողությունը, կծելը, պախուրցը հանելը, յեզուն հանելը, արջի պես յերեքվելը, սմբակի թագիկը կոխկոտելը և այլն) առաջանում են ձիու հետ վատ վարվելուց և նրան վատ խնամելուց, լծասարքն անկանոն տեղադրելուց կամ ախոտում յերկար ժամանակ առանց աշխատանքի մնալուց — անզորությունից: Ձին կարծես չի մոռանում ծեծվելուց ստացած, վատ տեղադրված լծասարքից, նեղ պախուրցից, սուր լկամներից, նեղ պայտից առաջացած ցավը և այլն, ուստի կարծես ուզում և ազատվել անհաճ զգացողություններից: Հեշտ չի մոռացնել տալ ձիերին այդ սովորությունները: Ամենից առաջ անհրաժեշտ և վերացնել այդ սովորությունների պատճառները և ըստ հնարավորություն ավելի քիչ պահել ձիուն առանց աշխատանքի:

Խրտնող ձին կամ հանկարծ կանգ և առնում ճանապարհին աշխատանքի ժամանակ, կամ յետ-յետ և գնում, կամ գնում և

վոչ այն կողմը, վորտեղ ուղարկում են նրան: Ձին խրատող և դառնում իր հետ անզուժ վարվելուց, ծեծից, լծասարքի անկանոն տեղադրումից, ուժից վեր աշխատելուց (ծանր բեռ) խըրտոնողութունը կարելի յե ուղղել միմիայն վերացնելով այդ պատճառները և համբերությամբ վարվելով ձիու հետ: Այդ դեպքերում ծեծը միայն ֆլասում է և վոչ թե ուղղում խրատողությունը:

Կծող ձին կաշում է առամներով մի վորևե առարկայի (սովորաբար կերարկղին) և կուլ տալիս ողը: Մի բանի ձիեր, չհենվելով կերարկղին, շարժում են շրթունքները, հետո արագ իջեցնում են գլուխը և կուլ են տալիս ողը: Կծող ձիերի առջևի առամները մաշվում են. բացի դրանից, ողը կուլ տալու դեպքում փորը և աղիքներն ուռչում են, ձին հաճախ հիվանդանում է ծակոցներով և հաճախ ստակում է: Չանել ձիերը արագ յուրացնում են իրենց կողմին կանգնած ձիերի կծելու սովորությունը: Ուստի կծող ձիերին պահել առանձին և հետևել, վոր նրանց կերարկղում միշտ խոտ կամ հարդ լինի:

Ձիերին կծելը մոռացնելու համար նրանց պահում են «արձակման» վիճակում, այսինքն յերկու սանձով, վորոնք կապված են լինում ձիու կանգնելու տեղի կողքի սյուներին, գլուխը դեպի անցքը, վորպեսզի ձին չկարողանա վորևե բան առամներով բռնել. բայց այդ ողնում է վոչ միշտ: Ոգտակար է նաև պահել ձիուն ախտից զուրս, ձողից կապած, վորը պինդ խրված է լինում գետնի մեջ, ցցի ծայրում պտուտակված է լինում մի ողակ, վորից կապում են ձին: Ավելի լավ է, յերբ կերարկղներն իջեցնում են հատակի վրա, այդ դեպքում հաճախ ձիերը մոռանում են կծելու իրենց սովորությունը:

Սմբուկը կռի սպալու դեպքում պետք է պաշտպանել սմբակի թաղիկը վիրավորվելուց: զրա համար, յերբ ձին կանգնած է լինում ախոտում, վտտին հազցնում են կաշկպատ թաղիքյա պատյան:

Յեթե ձին կծում կամ քացի յե սալիս մարդկանց և մոտը կանգնած ձիերին, այդ տեսակ ձիերի հետ զզույշ պետք է վարվել. նրանց կանգնելու տեղի դիմաց մի բանի վրա պետք է զրել՝ «ձին կծում է», «ձին արացում է», կամ պետք է անդավորել կծող ձիերին մի խուլ, ծածկած տեղում: Այդ տեսակ ձիերի հետ աշխատելիս հանձնարարվում է հպցնել նրանց հատուկ զընչկալներ:

Այն ձիերի համար, վորոնք սովորություն ունեն ախոտում պախուրքը համելու, հատուկ պախուրքներ են շինում: Դրա համար

պախուրքի այտերի փոկերի վերին մասը միացնում են մի առանձին փոկի, վորն ընդգրկում է պախանոցի վերին մասը: Այդ տեսակ պախուրքը ձին չի կարող հանել:

Լեզուն յուրս համելու դեպքում ընտրում են գանազան լրկամներ: Բացի դրանից, լկամներին հազցնում են պտավոլ վորորի զնդիկներ, ձին խաղում է այդ զնդիկների հետ և յերբեմն մոռանում է լեզուն հանելու սովորությունը:

Աջի պես յերեմվելու դեպքում ձին, կանգնելով իր կապելու տեղում, լայն չուում է առջևի վորտները, գլուխը և մարմնի առջևի մասն այս ու այն կողմ է որորում: Այդ տեսակ սովորությունն ազդում է սմբակների, ջլերի և առջևի վորտների հողերի վրա, վորովհետև մշտական որորումից նրանք հոգնում են: Բացի դրանից, արջի պես յերեմվող ձիերն իրենց այդ սովորությունով խանգարում են մյուս հարևան ձիերին՝ իրենց գլուխը նրանց դիպցնելով: Այդ արատի հիմնական պատճառն է ախոտում յերկար ժամանակ կանգնելը և պարագ մնալը: Այս պատճառով այդ տեսակ ձիերի վրա շատ պետք է աշխատել: Ավելի լավ է «այդպիսի ձիերին» պահել ազատ, առանց կապելու, առանձին խուլ տեղում: Հանձնարարվում է նաև կակուզ վորտակապեր զնել ձիու առջևի վորտներին, այն ժամանակ նա չի կարող լայն չուել առջևի վորտները և աջ ու ձախ որորվել:

Ի՞նչ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՆ ՀԱՃԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՁԻԵՐԸ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԿԱՆԵՆԸ ԱՅՊ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչ համներով են սարբում առողջ ձիանիվանդից:

Մարտիկը ձիուն խնամելիս և նրա վրա աշխատելիս պարտավոր է շարունակ հսկել նրա գրությանը. արտաքին հիվանդությունները՝ վերքերը, ուռուցքները, կաղությունը և այլն, հեշտ է նկատել: Ներքին հիվանդությունները կարելի է յերևան հանել բավարար ուշադրության և զխոռոականության դեպքում:

Առողջ ձին, յեթե նրան կանոնավոր խնամում են, միշտ գեր է լինում, աույզ, պշխատանքի մեջ աուկուն, համաչափ հենվում է վորտներին և շարժվում, աշխատանքից վերադառնալուց հետո սիրով է սկսում ուտել:

Հիվանդ ձին, չնայած լավ խնամքին և սննդին նիհարում է, շուտով հոգնում է աշխատանքի մեջ, սիրով չի կաշում ուտելուն, կերն ամբողջովին չի ուտում:

Մի քանի հիվանդությունների դեպքում ձին հայտարարում է անհանդաժմություն, մեկ մի փոսի վրա յե կանգնում, մեկ՝ մյուս փոսի վրա, կամ թե չի ուզում տեղից շարժվել: Հիվանդ ձիու մազերը կորցնում են իրենց փայլն ու առաձգականությունը, իսկ մի քանի վարակիչ հիվանդությունների ժամանակ կաշվի վրա հայտնվում են հանգուլցներ, բծեր (ցան և խոցեր): Շնչառություն որդաններով հիվանդ ձիերի շնչառությունն արագանում է, ներշնչելն ու արտաշնչելը դառնում է լարված, նվազ խոր, քթից դուրս է գալիս լորձնոտ կամ լորձնաթարսոտ հեղուկ: Հաճախ հիվանդ ձիերն ունենում են փորկապություն և փորհարիւր: Մեղը կարող է ստանալ անրնական դույն:

Մարտիկը պետք է չմոռանա, վոր ժամանակին նկատած հիվանդությունն ավելի հեշտ է բժշկվում, քան հնացած հիվանդությունը: Ուստի հիվանդության բոլոր նշանների մասին պետք է իսկույն զեկուցել իր հրամանատարին ու խորհուրդ և ոգնություն ստանալու համար զիմել անասնաբուժին կամ անասնաբուժակին:

Ինչ հիվանդություններ են լինում անկանոն կերակրելուց և ջուր օտար

Անկանոն կերակրելուց և ջրելուց հաճախ ձիերը հիվանդանում են ծակոցներով, ակումատիզմով (ՕՍՈՅ՝), փորկապությունը, փորլուծությունը և այլն, և կարող են սատկել:

«Ծակոցները» նշան են ստամոքսի և աղիքների հիվանդության: Ծակոցներ ունենալու դեպքում ձին ստամոքսում սաստիկ ցավ է զգում, անհանգստանում է, հրաժարվում է կերից, հաճախ փոխում է փոտները, խիում է և փորփրում վոտներով, տնքում է, վախեցած նստում է փորին, հաճախ պակուում է և վեր կենում: Յերբեմն ձին պակուում է հանգիստ, հետո սկսում է թավալվել, վոտները զարկել և հանկարծ թռչում ու վոսի յե կանդնում: Յեթե այդ նշանները վրա յեն հասնում աշխատանքի ժամանակ, այդ դեպքում ձին անսպասելի կերպով կանգ է առնում ու փորձում է պակել:

«Ծակոցներով» հիվանդանալն առաջ է գալիս շատ ուտեցնելուց, փչացած կերից (բորբոսնած վարսակ կամ խոտ, բորբոսնած կանաչ, փառով ծածկած հաց և այլն), աշխատանքից հետո չցամաքած ձիուն վարսակ տալուց, փոցը (ապպաստը), գոմաղը, ավազն ուտելուց: Ձիերը հիվանդանում են ծակոցներով, յեթե նրանց տանում են աշխատանքի՝ հատկավոր կերն ուտելուց ան-

միջապես հետո: Թարմ յերեքնուկով անզգույշ և առատ կերակրելը նույնպես կարող է հիվանդացնել ձիուն ծակոցներով: Հիվանդացած ձիուն անմիջապես պետք է ոգնություն հասցնի անասնաբուժը կամ անասնաբուժակը:

Ծակոցներով հիվանդացած ձիուն չի կարելի քշել և խփել մտրակով: Նրան պետք է տանել դանդաղ կամ թողնել, վոր պակելի ախոռում (կացոց), ավերացնելով փափուկ փոցը: Ման ածելու ժամանակ պետք է հետևել, վոր ձին չընկնի դետնի վրա և վտանգավոր վերքեր չպատճառի իրեն:

Ոգտակար քուղ շինել ծղոտից կամ խոտից և նրանով շփել ձիու փորը 20 — 30 րոպե:

Սմբակների ուսմայի բորբոսումը (ՕՍՈՅ՝) մեծ մասամբ առաջ է գալիս տաքացած ձիուն սառը ջուր խմեցնելուց: Այդ հիվանդության դեպքում յերևան է գալիս սմբակների ուժեղ հիվանդություն: Հիվանդ ձին առաջ է քաշում վոտները և դժվարությամբ է դնում. յերբեմն ձին բոլորովին չի կարողանում շարժվել տեղից: Հիվանդացած ձիու պայտերը պետք է հանել, յեթե նա պայտած է: Հիվանդության սկզբում, յերբ տաքություն կա սմբակներում, ոգտակար է դնել ձիուն ջրով բացած կավի մեջ: Դրա համար կավը տանում են ախոռը, վրան սառը ջուր են լցնում և կավից առաջացած խմորի մեջ դնում ձիուն: Կարելի յե նույնպես ձիուն մի ժամով կանգնեցնել զետի մեջ կամ ձիու վոտին փաթաթել տոպրակի, քաթանի կտոր, մահուղի կտոր և հաճախ ջրցանել նրանց: Այդ հիվանդության դեպքում ձիուն վարսակ չպետք է տալ: Յերբեմն այդ հիվանդությունից հետո փոխվում է սմբակների ձևը. սմբակների լայնքով առաջանում են ըլրակներ, վորոնք պատում են սմբակը ողակաձև:

Ինչ հիվանդություններ են լինում քամբի և լծատաբի անկանոն օտարկումից և անհմուտ ձիավարությունից

Ձիասարքի անփուլթ պահպանությունը, անկանոն կամ անհամապատասխան թամբումը և լծասարքի տեղադրումը, հեծվորի անկանոն նստվածքը ձիավարության ժամանակ, վերջապես ձիու անուշաղիք խնամքը և հեծվորի քնկոտությունը արշավանքային շարժումների ժամանակ առաջ են բերում ճգմում, կամ այլ կերպ ասած փասվածքներ ձիու մեջքի, ֆուրկի կամ ուտերի վրա: Այդ դեպքերում թամբը կամ լծասարքը վերցնելուց մի առժամանակ անց հայտնվում է հիվանդաղին տաք ուտուցը: Ձեռք տալիս ձին անհանգստանում է: Յեթե ճգմումը խորը չէ և ժամանակին մի-

Ղոցներ են ձեռք առնված (ազատել ձիուն աշխատանքից, ուղղել նստվածքի և թամբի պահասությունները, համապատասխան բժշկություն), ուռուցքը նստում է: Յերբեմն նրա տեղը կեղև է կազմվում, վորը ժամանակին անհայտանում է մազի հետ միասին: Խորը սեղմումների դեպքում ուռուցքը մեծանում է, նրա վրայի կաշին անզգայանում է և կոչանում է խոց: Յերբեմն սեղմումը բռնում է վոչ միայն կաշին և մկանները, այլ և տրցակները և նույնիսկ կոճուկներն ու վոսկորները: Անուշադրության մատնված սեղմումների ժամանակ հաճախ խոռոչներ են առաջանում:

Մնդավի ձգմումը հաճախ առաջ է գալիս, յեթե թամբի փոկը սեղմում է մնդավը, յեթե առջևի ցած դաշը կամ վառ ձգված քրտնաքաշը ճնշում են մնդավը և այլն: Այդ անկանոնություններն անմիջապես պետք է վերացնել: Մեղքի սեղմումներն ամենից հաճախ առաջանում են քրտնաքաշի անկանոնությունից:

Չզմումները հետևի դաշի տակ կամ անդլիական թամբի հետևի ծայրի տակ՝ հայտնվում են այն ժամանակ, յերբ թամբը փոքր է հեծվորի համար և վերջինս իր ծանրությամբ սեղմում է թամբի ծայրը և ձիու մեջքը: Նույնն է պատահում, յերբ հեծվորի նստատեղը սահում է առջևից դեպի յետ:

Աշխատանքից հետո անհրաժեշտ է ուշադրությամբ զննել ձիու մարմնի այն տեղերը, վորոնց վրա ճնշում են գործ զնում թամբը և յմասարքը: Չզմվածքներ առաջանալու դեպքում պետք է վերացնել դրանց պատճառները:

Թարմ ձգմվածքի դեպքում, այսինքն տաք ուռուցքի առկայության ժամանակ և առանց կուշվի ամբողջությունը խախտելու, ոզտակար է սառը կումպրես զնել, իսկ ձմեռը զնել ձյունով կամ սառույցով լի պարկ կամ տսպրակ:

Ինչ հիվանդություններ են լինում անկանոն պայտելուց և ձիերի սմբակը վաս խնամելուց

Սմբակի ներքանը կարող է տրորվել վատ պայտելուց, վատ տեղարկված պայտից, պայտի և սմբակի միջև ընկած քարի կտորտանքներից կամ այլ առարկաներից և պինդ գեանի վրա յերկարատե աշխատելուց: Ներքանը տրորվելու դեպքում ձին կաղում է և չի կարողանում վոտն ամբողջությամբ զնել գեանին: Ձեռքով շոշափելիս սմբակի մեջ շերմություն է զգացվում: Տրորումը նրկատելիս անմիջապես պայտը հանել և ձիու վոտը զնել շրով բաց արած կավի մեջ, ինչպես անում են սմբակների ռեմատիկ

բորբոքումը բժշկելիս: Ոզտակար է մի ժամով ձին կանգնեցնել գետակի կամ առվակի մեջ այնպես, վոր հիվանդ վոտը գտնվի ջրի մեջ: Ձմեռը կարելի յե սմբակի վրա ձյուն զնել: Դրա համար վերցնում են մի կտոր քաթան կամ մահուղ, նրա մեջ ձյուն են լցնում և զնում ներքանի վրա՝ մահուղի կամ քաթանի ծայրերը թելով կամ ժապավենով կապում են ձիու կոճի շուրջը:

Թազիկի վոսնախարքը մեծ մասամբ առաջանում է անկանոն պայտելուց, յերբ սմբակի տակից սուր ցցվում է պայտը, կամ դուրս են ցցվում պայտի սեպերը և մեխի գամերը: Պայտի այդ դուրս ցցված մասերը կարող են վիրավորել հարևան վոտը: Վոտնահարքն առաջանում է նաև ձիու վոտների անկանոն գրքվածքից, անկանոն յերթից և անկանոն քայլվածքից, յերբ ձին շարժվում է խորը ձյունի մեջ և այլն: Մակերեսային վոտնահարքը սովորաբար արագ բժշկվում է, յեթե իր ժամանակին միջոցներ են ձեռք առնվում:

Յեթե ձին իրեն խոր վերք է հասցրել կամ վոտնահարքը հնացած է և ձին կաղում է, պահանջվում է անասնաբուժի կամ անասնաբուժակի ոգնությունը:

Անդրպայտումը (заковка) առաջանում է այն դեպքում, յերբ պայտաբը մեխը խփում է շատ խորը սմբակի փափուկ մասերի ուղղությամբ: Այդ տեսակ պայտած ձին կաղում է:

Վորպեսզի իմանան, թե վնքն է անկանոն խփված և կաղություն առաջացնող մեխը, բարձրացնում են ձիու վոտը և մուրձով թեթե զարկում են պայտած մեխերի գլխին: Յերբ խփում են այն մեխին, վորը խորն է մտած, ձին ցավ է զգում և վոտը յետ է քաշում: Այդ տեսակ մեխն իսկույն պետք է հանել և ուրիշ մեխ չխփել: Անդրպայտումը բժշկելու համար պետք է դիմել անասնաբուժին կամ անասնաբուժակին:

Ներքանի ծակոցն առաջանում է սմբակի ներքանի տակ պատահաբար ընկած մեխերից, փայտի սուր կտորներից, յերկաթից, կարծր ձյուղիկներից, շարզված ապակիներից, սուր վոսկորներից և այլն: Ամենից հաճախ այդ տեսակ ծակոցները լինում են սմբակի սլաքի մոտ:

Ներքանի ծակոցի դեպքում անմիջապես պետք է ազատել սմբակն իր մեջ ընկած առարկայից, վոտից պայտը հանել, մաքուր շրով ամբողջ ներքանը լվանալ և ցույց տալ ձիուն անասնաբուժին կամ անասնաբուժակին:

Ներքանի վերքն ազրով կամ հոզով կեղատավելուց կարող է

առաջանալ ձիու ծանր և մահացու հիվանդութիւնը — կարկամախաբը (СТОЛБНЯК):

Սլաֆի նեխոււմը և բորբոսնումն առաջանում է այն ժամանակ, յերբ ձիերին պահում են խոնավ, կեղտոտ, աղբով պատած հատակի վրա և յերբ վատ են մաքրում սմբակների աղբը, վորը կպած է լինում ներբանին և սլաքի աղտոսիկներին: Այդ հիվանդութիւնն արտահայտվում է նրանով, վոր սմբակի սլաքը կակղում է և սլաքի վրայի յեղջուրը թափվում է կտորներով: Սլաքն աստիճանաբար փոքրանում է: Յեթե այդ հիվանդութիւնը չբժշկվի, այդ զեպքում սմբակը սեղմվում է և ձին սկսում է կազալ: Սլաքն ավելի հաճախ նեխում ու բորբոսնում է հետևի վտանների վրա:

Յեթե հիվանդութիւնը հայտարարված է ժամանակին, հեշտութեամբ և բժշկվում սմբակը լավ խնամելով և այն մաքուր պահելով:

Վար հիվանդութիւններն են կոչվում վարակիչ

Վարակիչ հիվանդութիւնները հեշտութեամբ են անցնում մի կենդանուց մյուսին: Այս պատճառով, յերբ մի ձի հիվանդանում է վարակիչ հիվանդութեամբ, յեթե հատուկ միջոցներ ձեռք չառնվեն, կարող են հիվանդանալ նրա հետ շփվող մնացած ձիերն ևս: Ձիերի մի քանի վարակիչ հիվանդութիւնները փոխանցվում են նույնիսկ մարդուն և մահացու հիվանդութիւն են առաջանում (խնախա, սիրբխա):

Վարակիչ հիվանդութիւնների գրգռիչներ հանդիսանում են միկրոբները, վորոնք ընկնում են կենդանու որդանիզմի մեջ: Միկրոբները մանրագույն էյակներ են, վորոնք տեսանելի չեն միմիայն հատուկ խոշորացույց գործիքներով (միկրոսկոպ): Միկրոբների մեծութեան մասին կարելի չէ գատել այն բանից, վոր մի կաթիլ ջրի մեջ կարող են լինել հարյուր միլիոնավոր միկրոբներ: Խնախաբը (сая) առաջացնում են խնախա միկրոբները, սիրբխաբը — սիրբխա միկրոբները և այլն:

Ընկնելով կենդանու մարմնի մեջ՝ միկրոբները կարող են արագ բազմանալ և հիվանդութիւն առաջացնել:

Ձիերի վարակումը կարող է տեղի ունենալ ամենատարբեր ճանապարհներով: Շատ հաճախ վարակումը կատարվում է կերի, ջրի, խնամքի առարկաների և ձիու հարգարանքի միջոցով: Կերի, խմելու ջրի, լորձունքի և քթից հոսող հեղուկի հետ վարակիչ հի-

վանդութիւնն առաջացնող միկրոբները հիվանդ կենդանուց անցնում են առողջների մարմնի մեջ: Վարակումը կարող է տեղի ունենալ նաև միջատների խայթումի միջոցով (ճանճեր, բուսեր, շնաճանճեր): Յերբեմն միկրոբներն ընկնում են արյան մեջ կաշու զանազան վնասվածքների միջոցով (վերքեր, ճմլվածքներ, ճանկրտոցներ), ներս շնչվող օդի հետ և այլն:

Մի քանի վարակիչ հիվանդութիւնների, որինակ՝ սիրբխախա, առանձնահատկութիւններից մեկն այն է, վոր այդ հիվանդութեամբ հիվանդացած ձին յերկրորդ անգամ չի վարակվում: Այդ առանձնահատկութեան վրա էլ հիմնված են, այսպես կոչված, պատվաստումները: Կատարելով պատվաստումը, մենք ստիպում ենք որդանիզմը հիվանդանալ թեթև ձևով և պաշտպանում ենք առժամանակ (մի քանի ամսից մինչև մի տարի և ավելի) այն հիվանդութեան վարակումից, վորի դեմ կատարված է պատվաստումը:

Յերբ միևնույն նշաններով հիվանդանում են մի քանի ձիեր, անհրաժեշտ է անմիջապես առանձնացնել հիվանդացած ձիերին մյուսներից և տանել հատուկ շինութիւն (իզոլյատոր): Ախտում, վորտեղ յերևացել է վարակիչ հիվանդութիւնը, անհրաժեշտ է հատուկ ուշադրութիւն դարձնել, վոր վարակիչ հիվանդութեան տարածվելու և խնամքի առարկաների միջոցով (ջրի գուլերը, տոպրակները, խոզանակները, քերիչները և այլն) հիվանդութիւնը մի ձիուց մի ուրիշ ձիուն անցնելու հնարավորութիւնը վերացվի, ինչպես նաև ձիու հարգարանքների միջոցով (թամբեր, լծասարք և այլն):

Վարակիչ հիվանդութիւնները զորամասերը մտնելուց խուսափելու համար սահմանվում է այնպիսի կարգ, վոր վարակված ձիերի մոտից բերած ձիերին վորոշ ժամանակ (21 — 40 օր) պահում են առանձնացրած մյուս ձիերից (կարանտին), վորպեսզի պարզվի, չկան արդոք նրանց մեջ վարակվածներ:

Առանձին ուշադրութիւն են դարձնում սատկած կենդանիների դիակները հեռացնելու վրա: Կենդանիների բոլոր դիակները թաղվում են անասունների հատկացված գերեզմանոցներում կամ ուղարկվում են ոգտագործման (ուտիլիզացիա) գործարանները: Ըստ վորում նրանց տանում են ցինկով պատած սայլերով կամ դիակի տակ հարդ են շաղ տալիս, վորպեսզի հողը չկեղտոտվի դիակից յեղնող արտաթորումներով:

Հարզը թաղում են դիակի հետ միասին կամ այրում են,

իսկ սայլը խնամքով լվանում են մոխրաջրով և վարակահան հեղուկներով:

Վարակիչ հիվանդութունից սատկած կենդանու կաշին մաշկել կարելի չէ միմիայն անասնաբուժի թույլտվութեամբ: Մի քանի վարակիչ հիվանդութունների դեպքում, համաճարակի տարածումից խուսափելու համար, թույլ չի տրվում դիակներից կաշին հանել, և դիակը թաղում են կաշվով միասին, ըստ վորում կաշին նախապես պետք և փշացնել այրելով, վորպեսզի վոչ վոք չկարողանա ոգտվել նրանից և, հետևապես, նաև վարակվել: Սատկած կենդանիների դիակները թաղում են 2 մետրից վոչ պակաս խորութեամբ, ըստ վորում փոսերի վրա հողարլուրներ են շինում մինչև 75 սանտիմետր բարձրութեամբ:

Վարակիչ հիվանդութուններով հիվանդանալու կամ նրանցից սատկելու դեպքում անհրաժեշտ և ախտահանութուն կատարել այն տեղերում և շինութուններում, վորտեղ գտնվել և հիվանդ ձին, և այն առարկաների վերաբերմամբ, վորոնց դիպել և նա: Այն շինութեան մեջ կամ այն տեղում, վորտեղ գտնվել և հիվանդ ձին կամ սատկած ձիու դիակը, պետք և ամենից առաջ մաքրել կեղտը և աղբը: Ավելի լավ և այրել աղբը կամ ծածկել չհանգած կրով և թաղել հողի մեջ: Մաքրումը և ապավարակումը կատարվում են տարբեր միջոցներով և յեղանակներով անասնաբուժի կամ անասնաբուժակի ցուցումով:

Զինվորական ձիերի մեջ կարող են պատահել հետևյալ վարակիչ հիվանդութունները՝ խլնախտ, փորլուծ, սիրիբախտ, վարակիչ պլեյրոպնիմոնիա և պիրոպլազմոզ:

Խլնախտն առաջանում և այն միկրոբից, վորը գտնվում և խլնախտով հիվանդ կենդանու բոլոր գատուցքների, քթից հոսող հեղուկի (հազի ժամանակ), կաշվի խոցերի թարախի մեջ: Զիու վարակումը խլնախտով տեղի չէ ունենում, յերբ միկրոբներն ընկնում են վրասված կաշվի վրա կամ որգանիդմի մեջ: Մանսավանց ավելի հաճախ են վարակվում ձիերը խլնախտով կերի, խմելու ջրի, կերարկղների, ձիու խնամքի առարկաների, լծասարքի և այլ առարկաների միջոցով, վորոնք կեղտոտված են հիվանդ ձիու արտաթորութուններով:

Խլնախտի սովորական նշաններն են՝ թարախի ծորումը քրթից և ծնոտի տակ անցավ, բլբոտ, անշարժ, կարճես կպած ուռուցքը (քթի խլնախտ): Յերբեմն մարմնի զանազան տեղերում, ամենից հաճախ հետևի վոտների վրա, կրծքին և վզի վրա հայտ-

նըվում են փոքրիկ ուռուցքներ: Այդ ուռուցքները, վոր սկզբում պինդ են լինում, հետո հետև կակղում են, ծակվում և նրանց միջից հոսում և արյունոտ կամ թարախանման հեղուկ: Ուռուցքի տեղը գոյանում են ձագարածե խոցեր՝ անհարթ, կարճես կրծոտած ձայրերով (կաշվի խլնախտ): Պատահում և նաև, վոր խլնախտը հարվածում և միայն թոքերը և խլնախտի արտաքին վոչ մի նշան չի յերևում (թոքերի խլնախտ): Այդ դեպքում հիվանդութունը ձգձգվում և յերկար ժամանակ, ըստ վորում հիվանդ ձին նույնիսկ կարող և հիվանդութեան վոչ մի նշան ցույց չտալ: Սկզբի սրերում թոքերի խլնախտը կարող և հայտնվել միայն հազով և ձիու աստիճանաբար նիհարելով:

Խլնախտի իմանում են՝ արյունը հետազոտելով և աչքի մեջ մի առանձին հեղուկ — «մալլեին» կաթեցնելով: Խլնախտի հիվանդութեան կողմից կասկածելի ձիու աչքը 1 — 2 կաթիլ մալլեին կաթեցնելով՝ հայտնվում և ուռուցավորում և աչքից թարախ և թափվում: Առողջ ձին այդ տեսակ յերևույթներ չի ցույց տալիս: Խլնախտով հիվանդացած ձիերին անմիջապես վոչնչացնում են: Խլնախտի հիվանդութեամբ կասկածելի ձիերին պետք և առանձնացնել առողջ ձիերից՝ հետազոտելու համար:

Խլնախտը հեշտութեամբ և անցնում մարդուն հիվանդ ձիուց: Ուստի խլնախտի հիվանդութեամբ կասկածելի ձիերին խնամելիս պետք և առանձնապես զգույշ լինել: Կասկածելի ձիերի հետ գործ ունենալուց հետո պետք և խնամքով լվանալ ձեռները սապոնով և ախտահանիչ լուծույթներով:

Փորլուծով սովորաբար հիվանդանում են կաթից կարած մորուկները և ջահել ձիերը (մինչև 4 տարեկանները): Հասակավոր ձիերը հազվադեպ են հիվանդանում փորլուծով: Յերբ ձին հիվանդանում և փորլուծով, առաջ և գալիս տաքութուն, քթից թարախ և հոսում, ներքին ծնոտի տակ գոյանում և հիվանդոտ և տաք ուռուցք, վորն արագութեամբ թարախակալվում և: Մեծ մասամբ ուռուցքից թարախը դուրս գալուց հետո տաքութունն իջնում և և հիվանդ ձին առողջանում և:

Փորլուծով հիվանդացած ձիերին պետք և առանձնացնել առողջներից: Փորլուծով հիվանդացած ձիերին պետք և պահպանել մրսելուց և միևնույն ժամանակ հողալ, վոր ողն ախտում մաքուր լինի: Գրա համար պետք և հետևել ախտի կանանավոր սղափոխութեանը: Յեթև կուլ տալու՝ գործողութունը դժվարացած և, կերի հետ ապլիս են թեփի և ալյուրի ջրալի խառնուրդ: Զին

փորձուծով հիվանդանալու զեպքում անհրաժեշտ է զիմել անասնաբուժին կամ անասնաբուժակին:

Փորձուծով հիվանդ մարուկներն ու ձիերը մինչև կատարելագետ առողջանալը չպետք է բաց թողնվեն ընդհանուր արտատակին:

Սիրիբախտով հիվանդանալու զեպքերը նկատվում են առանձնապես հաճախ ամառվա տաք ամիսներին: Այդ հիվանդությամբ ձիերը կարող են վարակվել արտատակում, ճահիճների և լճերի կանգնած, կեղտաված, միկրոօրգանիզմով վարակված ջուրը խմելու միջոցով, սիրիբախտի նկատմամբ անբարեհաջող տեղերից բերած խոտի միջոցով, ճանձերի և բուսերի կծելով, վորոնք նստած լինելով հիվանդ կենդանիների արտաթորությունների և սիրիբախտից սատկած գիակների վրա, փոխանցում են համաճարակն առողջ կենդանիներին: Վարակումը կարող է առաջանալ նաև հիվանդ կենդանիների արտաթորություններով աղտոտված առարկաների միջոցով, որինակ՝ խոզանակի, քերիչի, թամբի, լծասարքի, ջուր խմելու դուլերի, տոպրակների, կերաքիչների միջոցով և այլն, յեթե նրանցով ոգտվում են առանց նախապես ախտահանելու:

Սիրիբախտի նշանները միշտ ել միատեսակ չեն: Հաճախ հիվանդացած կենդանին սատկում է հանկարծակի: Ուրիշ զեպքերում հիվանդությունը տևում է մի քանի օր (ձիունը 2—3 օր): Հիվանդությունն այդպիսի ընթացք ունենալու զեպքում հիվանդ կենդանին հրաժարվում է ուտելուց, յերեան է գալիս սաստիկ տաքություն: Շնչատությունը դառնում է ծանր: Ձին հիվանդության սկզբում կարող է ունենալ ծակոցներ: Այդ նշաններից հետո ամբողջ մարմինն սկսում է զոգալ, և կենդանին մահանում է ուժեղ կծկումների մեջ: Յերբեմն փորի տակ, կրծքի և ձկապարկի վրա հայտնվում են ուռուցքներ, վորոնք սկզբում լինում են պինդ, տաք, ցավեցնող, բայց հետո, ընդհակառակը, դառնում են անցավ և սառը:

Սիրիբախտը շատ վտանգավոր է և մեծ մասամբ վերջանում է մահով: Սիրիբախտի դեմ պայքարելու մեջ հատուկ նշանակություն ունի սիրիբախտով սատկած կենդանիների գիակների հավաքումը: Սիրիբախտից ընկած կենդանիների գիակներն այրում են, կամ կաշվի հետ միասին թաղում են հողի մեջ 2 մետրից փոչ պակաս խորությամբ: Այն շինությունները, վորոնց մեջ գտնվել են սիրիբախտով հիվանդ ձիեր, պետք է մաքրվեն և ախտահան-

վեն: Նույնպես պետք է ախտահանվեն ախտում գտնված բոլոր առարկաները և հիվանդ կամ սատկած կենդանու գոմաղբը, մեզը և այլն:

Յերբ արածող ձիերը հիվանդանում են սիրիբախտով, իսկույն պետք է դադարեցնել այդ արտատակերից ոգտվելը: Յերբ կատկած կա սիրիբախտով հիվանդանալու նկատմամբ, անմիջապես պետք է զիմել անասնաբուժին: Սիրիբախտի դեմ զոյություն ունի պատվաստում, վոր կիրառվում է հիվանդությունը կանխելու և արդեն հիվանդացած կենդանիներին բժշկելու համար:

Սիրիբախտով հիվանդացած ձիերին խնամելիս և նրանց գիակները հավաքելիս հարկավոր է շատ զգույշ լինել և պահպանել անձնական հիգիենայի բոլոր կանոնները՝ այդ հիվանդությամբ վարակվելուց խուսափելու համար:


Վարակիչ պլեթրապնեմոնիայով մեծ մասամբ հիվանդանում են ախտային պահպանությանն անսովոր ջահել ձիերը: Այդ հիվանդության ծավալմանը նպաստում են ձիերի պահպանության վատ պայմանները, մասնավորապես նեղ, մութ, խոնավ, կեղտոտ և վատ ողափոխվող ախոսները, բորբոսնած, փոշեպատ խոտը, մրսելը և այլն: Վարակումը տեղի յե ունենում ամենատարբեր ճանապարհներով: Հիվանդությունն սկսվում է տաքությամբ: Հիվանդացած ձին հայտարերում է հոգնածության նշաններ, հրաժարվում է ուտելուց:

Հետադայում հայտնվում են թոքերի բորբոքման նշաններ շնչատությունը դառնում է ծանր, ձիերը կանգնում են՝ վոտները չռած, սոււնդները լայն բացած և խուսափում են պոռկելուց, քլթից սովորաբար ժանդի գույն ունեցող հեղուկ է հոսում:

Այդ հիվանդությունը յերեալիս, հիվանդացած ձիերին անհրաժեշտ է իր ժամանակին առանձնացնել ընդհանուր ախոսից՝ բժշկելու համար: Ախոսները հաճախ ողափոխության են յենթարկում, փոսցը փոխում են ամեն օր, աղբն անմիջապես հեռացնում են: Խաղաղ յեղանակին առողջ ձիերը հնարավոր չափով յերկար պետք է պահվեն ձիակապարաններում: Ձիերին պետք է մաքրել միմիայն ձիակապարաններում:

Պիրոպլազմոզը ձիերին անցնում է միայն շնածանձերի միջոցով, վորոնք գտնվում են գլխավորապես մացառուտներում և անտառներում: Շնածանձը ծծելով արյունը հիվանդ ձիուց, հարողում է հիվանդությունն իր սերնդին: Հետևյալ գարնանը

վարակված մատաղ շնաճանճերը հարձակվում են ատոյջ ձիերի վրա և նրանց հիվանդացնում (նկ. 16):



Նկ. 16. Շնաճանճեր — պիրոպլազմոֆի հազորդիչներ (սասիկ մեծացրած տեսքով) զաղաբում և ուտելուց և կանչում են՝ գլուխը կախ գցած:

շնչաուղիները ծանրանում են: Հիվանդությունը սկզբում ունենում է փոքրագույն, վաղից հետո հաջորդում է փորլուծը: մեղր հիվանդության սկզբում դառնում է կարմիր, իսկ վերջում փոխում է իջ գույնը և դառնում է մուգ-շագանակագույն: Ձին արագ նիհարում է, թուլանում, սրբովում է ման գալիս, բայց համարյա չի պահում: Յերբեմն կրճքի և փորի տակ հայտնվում են ուռուցքներ: Հիվանդ ձիու լնդերն ու աչքերի սպիտակուցը դեղնում են: Ձիերը ջանել հասակում ավելի հեշտություններ են դիմանում հիվանդությանը, քան ձերու թյան ժամանակ:


Վորքան լավ է հիվանդ ձիու խնամքն ու պահպանությունը, ինչքան վաղ տակ նիվանդացած ձիուն կատարյալ հանգստություն, այնքան լավ կդիմանա նա պիրոպլազմոֆին: Հիվանդ ձիերին պետք է կերակրել լավ խոտով: յեթե փորլուծ չկա, կարելի չէ քիչ-քիչ տալ և թարմ խոտ: Զուր պետք է տալ այնքան, ինչքան կլսի ձին:

Ձին հիվանդանալու դեպքում խիստ պետք է դիմել անասնաբուծի կամ անասնաբուժակի սղնությունը: Առողջացող ձիերին հարկավոր չէ աշխատեցնել՝ մինչև նրանց ատոյջության և ուժերի կատարյալ վերականգնումը, վորովհետև հակառակ դեպքում հիվանդությունը կարող է վերսկսվել:

Վատ խնամքի, կեղտոտ պահպանության, վատ մաքրումի դեպքում և այլն ձիերը կարող են հիվանդանալ քոսով, մրմջուկով և վոլյուտությունով:

Քոսի գրգռիչն է հանդիսանում հատուկ քոսի ճեղքաներ, վորը մանում է կաշվի մեջ (նկ. 17):

Ձիու քոսով հիվանդանալու դեպքում առաջանում է սաստիկ քոր, ձին քորում է իրեն և կրծում է առաջներով իր մարմնի մտոչելի մասերը: Կաշվի հիվանդ տեղերում մաղը թափվում է, կաշին կարմրում է և ճաքում, ճաքած տեղից դուրս է դալիս մաժուցիկ հեղուկ, վորը շորանում է կեղև և դառնում: Այդ անմաղ տեղերում գոյանում են կաշվի կարծր ծալքեր: Յերբ կաշին փոքր չափով է հիվանդանում քոսով, ձին շուտով առողջանում է, յեթե ժամանակին բժշկում են նրան: Իսկ յեթե հիվանդությունն անուշադրություն է մատնում, գարգանում է ուժասղատություն, և ձին կարող է սատկել: Հիվանդ և քոսի հիվանդությամբ կասկածելի ձիերին անմիջապես պետք է առանձնացնել ատոյջներից: Մնացած բոլոր ձիերին, մանավանդ թեկուզ աննշան քոր ունեցողներին, պետք է ուշադրությամբ հետևել:



Նկ. 17. Քոսով հիվանդ ձին յեվ քոսի ճեղքաներ (սասիկ մեծացրած տեսքով):

Քոսը բժշկում են զանազան քոսակներով, վորը մտցնում են մարմնի հիվանդացած մասերը: Բացի դրանից, ձիերին բժշկում են առանձին կամերաներում, վորտեղ հիվանդ ձին ծխահարում են ծծմբային գազով, վորն ստանում են ծծմբի ալերուց:

Քոսի դեմ դեղ ընդունելուց առաջ ձին լավ լվանում են տաքացրած ջրով և ստպոնով, կամ տաքացրած մոխրաջրով: Լվանալուց հետո ձին մաքրում-ցամաքեցնում են կամ թողնում են, վոր ինքը ցամաքի-չորանա և միայն դրանից հետո յեն ներքում դեղը: Յեթե փրաված տեղերը շատ են, միանգամից ամբողջ

մարմինն չեն քսում քսուկը, այլ որամեջ՝ մի յերրորդ մասին: 5 — 7 սրից հետո ներքսուկը կրկնում են՝ տաք մոխրաջրով առաջվա տեղը նախապես լվանալով-մաքրելով: Ձմեռը լվանալու գործողութիւնը կատարում են տաք շինութեան մեջ: Բուժելու հետ միաժամանակ պետք է մաքրել ախտը և այն առարկաները, վորոնց զիպել է հիվանդ ձին. անասնոցի պատերը և հատակը լվանում են տաք մոխրաջրով, թամբերին և լծասարքին քրտում են մաքուր ձյութ:

Մրճուկով ձիերը շատ են հիվանդանում ձմեռը: Հիվանդութեան պատճառ է հանդիսանում միմիայն խոշորացույցի միջոցով տեսանելի սնկիկը (միկրոբ), վորը ցնասում է մազերին: Այդ սնկիկը, բացի կենդանու մարմնից, կարող է գտնվել գանազան առարկաների վրա ախտում՝ կերարկղների, խոզանակների, քերիչների, լծասարքի և այլոց վրա: Հիվանդութիւնն անցնում է առողջ և հիվանդ կենդանիների իրար հետ շփելուց, այլ և հիվանդ ձիու խնամքի առարկաների և լծասարքի միջոցով: Բացի դրանից, առողջ ձիերը կարող են հիվանդանալ մրճուկով, յերբ մաքրելու ժամանակ փոշին հիվանդ ձիուց ընկնում է նրանց վրա:

Մրճուկով հիվանդանալու դեպքում սկզբում ձիու մարմնի վրա հայտնվում են անհարթ տեղեր, վորոնք շոշափվում են՝ ձեռքով կաշին շփելիս: Մազերն այդ տեղերում կպչում են իրար և գոյացնում են կեղև: Կեղևներն ընկնելուց հետո գոյանում են կլոր ճաղատ տեղեր, 5 կտակեանոցի մեծութեամբ, յերբեմն նույնիսկ ավելի մեծ: Մազն այդ տեսակ տեղերի շուրջը հեշտութեամբ թափվում է:

Հիվանդանալու առանձին դեպքեր հեշտ են բժշկվում: Յերբ մրճուկը սաստիկ տարածված է ձիերի մեջ, այդ հիվանդութեան դեմ պայքարելը դժվարանում է: Ուստի մրճուկի դեմ պայքարելու գործում առանձին նշանակութիւն ունի հիվանդութեան կանխումը: Դրա համար մաքրելու և հավաքելու ժամանակ անհրաժեշտ է կաշվի վրա նկատված բոլոր փոփոխութիւնների մասին հազորդել անասնաբուժին կամ անասնաբուժակին: Ձիերին մաքրում են ձիակապարանում, ըստ վորում նրանց տեղավորում են այնպիսի հեռավորութեամբ իրարից, վոր մաքրելու ժամանակ փոշին և թեփը մի ձիուց մյուսի վրա չընկնեն: Առանձին խնամքով ախտից պետք է հավաքել աղտոտութիւնները: Տասնորդական անվազն մի անգամ պետք է սպիտակացնել ախտի ներսը և լավ ոգափոխութիւն կատարել: Ձիու խնամքի առարկաները, վոր գործ են անում մրճուկով հիվանդացած ձիերին մաքրելու

համար, ախտահանվում են տասնորդակում մի անգամից վոչ պակաս:


Վաղասուրյունը լինում է ձիերի մեջ վատ պահելուց և մանավանդ վատ մաքրելուց: Ամենից հաճախ վոջիւնները պատահում են պոչի արմատի մոտ, մեջքի և վզի վրա և ականջներում: Վոջիւնները սնվում են կենդանիների արյունով և քոր են առաջ բերում: Վոջիւնները բազմանում են ձվերի (անիծ) միջոցով, վորոնք կպչում են կաշվի մազերին: Վոջտուութեան կանխման հիմնական միջոցը կենդանիներին մաքուր պահելն է և կատարյալ մաքրութիւնը շինութիւններում:

ՁԻՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՆԱՎՈՐՈՂ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Ձիերին թունավորող նյութերից (ՕՅ) պաշտպանելու համար, շնչառութեան որդանների կողմից, ներկայումս կիրառում են ձիու թաց և չոր հակազագ, վորը ներծծված է հատուկ հեղուկով: Նա ունի տոպրակի ձև և հագցնում են ձիու վերին ծնոտի վրա: Յուրաքանչյուր ձիու համար պետք է նախապես հարմարեցվի և նրան ամրացվի հակազագ, վորի համար հակազագի պատյանի վրա դնում են նշանափայտի համարը կամ գրում են ձիու անունը: Հեծկան ձիու հակազագը կախում են առջևի բեռի աջ կողմից, հրետանու ձիունը — առջևի բեռի յերկու կողմից (թամբակապվող ձիերի), զուժակի ձիերինը — խամութի մոտ կամ սայրյակում: Նայած ձիու վարժութեան աստիճանին, ձին կարող է կրել հակազագը չորս ժամ և ավելի: Հակազագը ձիուն հագցնելու համար սահմանված է 10 վայրկյան: Հակազագը «պատրաստի» վիճակում դնելու համար քակում են դրսի բեղեմնոտի պատյանը:

Հակազագը հագցնելու յեղանակները (Ձկ. 18)

1. Հակազագը հանում են տոպրակից, վերցնում են հակազագը ձախ ձեռքով ճակատի յերիզակի մոտ, մոտեցնում են ձիու գլխին և բռնում են աջ ձեռքով սանձերը լիամին մոտ:
2. Աջ ձեռքի չորս մատները՝ ցուցամատից մինչև ճկույթը, դնում են ձիու քթին, իսկ մեծ մատը կոխում են ձիու բերանի անատամ ծայրը և, մատով սեղմելով ձիու բերանի ամուր քիմքը, բացում են նրա բերանը, հակազագը մոտցնում են քիմքի բարձիկի կողմից բերանը և արագորեն ձգում են այն ձիու քթի վրա:
3. Ձգելով ճակատի յերիզակը ճակատափոկի սանձիկի տակ, ամրացնում են այն, արագ ձգում են ծոճրակի յերիզակը և նե-



Նկ. 18. Ձիերի հակազագ հագցնելու յեղանակներ:

տում են ականջների հետևը. ուղղում են թերությունները:

4. Ամուր քաշում են շրջանային յերիզակը:

Հակազագը հանելիս բաց են անում (արձակում են) շրջանային յերիզակը, բացում են ճակատինը, զեն են նետում ծոծրակինը և բերանից հանում են հակազագը: Բռնելով հակազագը

ցած՝ միջնատամյա շարվածքով, դարսում են նրա մեջ յերիզակները, ծալում են փայտիկների յերկարությամբ և դնում են պատյանի մեջ:

Քիմիական հարձակումից հետո, հակազագը մի ձիուց մյուսին տալու դեպքում, յերկարատե պահելուց հետո և այլն, ախտահանում են՝ յեփ տալով (յետացնելով) այն սովորական ջրի մեջ 30 րոպե, և ապա լվանում են մաքուր սաք ջրով: Ախտահանությունից հետո հակազագը չորացվում և և նորից սողորվում (ներծծվում):

Հակազագը չլինելու դեպքում ողավում են սուպրակից կամ ալեկի լավ և՛ յերկու սուպրակից, իրար մեջ դրած, մացնելով նրանց մեջ խտաի շերտ, վորը ներծծված է 3 — 5 տոկոսանոց կալաքարային լուծույթով և այլ կալաքարերով:

Ձիերի աչքերը թունավորող նյութերի գոլորշիներից և կաթիլներից պաշտպանելու համար, այլ և ամբողջ իրանը ողից թափվող հեղուկ թունավորող նյութերից պաշտպանելու համար գործ են լածում հատուկ ակնոցներ և թիկնոցներ: Ձիերի վերջավորությունները պաշտպանելու համար, յերբ նրանք անցնում են վարակված տեղով, կիրառվում են գուլպաներ, հատուկ գործվածքից պատրաստված: Հատուկ թիկնոցներ չլինելու դեպքում ձիու պաշտպանության համար կարելի յե կիրառել բրեզենտներ, տապճակներ և այլն:

«Ողային տագնապի» ազդանշանը լսելիս ձիերին արագ մացնում են ախոռները (յեթե կան ախոռներ) և ամուր ծածկում են դռները, պատահանները և հողմահարիչը: Մարտիկները հագնում են հակազագերը և հագցնում են նաև ձիերին: Իսկ յեթե ախոռներ չկան և ձիերը մնում են բացօթյա, ապա, բացի նրանց հակազագ հագցնելուց, նրանց վրա թիկնոցներ են գցում:

Յեթե ձիերը թունավորվում են թունավորող նյութերով, նրանց հանում են վարակված տեղից և ուղարկում են առաջավոր անասնաբուժական կետը:

Թունավոր հեղուկ նյութերից, մանավանդ դաշտային պայմաններում, կերը, միսը և այլ պարենները պաշտպանելու համար նրանց պահպանությունն ու տեղափոխությունը կատարում են միմիայն բրեզենտի տակ, ըստ վորում պարենների և բրեզենտի միջև դնում են նաև խտաի, ճյուղերի և այլ շերտեր:

Թունավորող նյութերն առանձնապես վտանգավոր են այն դեպքում, յեթե անհատական պաշտպանության միջոցներն ուշ

են կիրառվում և յեթե ֆուսովելու դեպքում իր ժամանակին չի հասնում բժշկական ոգնությունը:

**ԲՆԴՉԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ ՀԻՎԱՆԴ, ՎԻՐԱՎՈՐՎԱՆՑ ՅԵՎ
ԹՈՒՆՍՎՈՐՈՂ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՎՆԱՍՎԱՆՑ ՁԻՆԻ
ԲԱՅԱՀԱՆՄԱՆ (эвакуация) ՄԱՍԻՆ**

Հիվանդ, վերափորված և թունավորող նյութերից ֆուսոված ձիերին, նայած նրանց հիվանդություն լրջությունը, հանձնում են (բացահանում են) թիկունքում գտնված անասնաբուժական հիմնարկներին:

Առաջին ոգնությունը անասնաբուժակի կողմից ցույց տրբվելուց հետո հիվանդ ձիերին ուղարկում են անասնաբուժական ոգնություն առաջավոր կետը (ППВ), վորը գալիս է քայլով գնդի գումակի առաջին շարանի հետ, իսկ պաշտպանություն կամ կովի դեպքում գտնվում է մարտական գծից 3 — 5 կիլոմետր հեռավորության վրա: Ոգնություն հասցնելուց հետո ձիերին բացահանում են գնդի անասնաբուժական հիվանդանոցը (ПВА), վորը գտնվում է գնդի գումակի 2-րդ շարանում, առաջավոր գծից 10 — 15 կիլոմետր հեռավորությամբ:

Հիվանդ և վերափորված ձիերին անհրաժեշտ է տանել 3 կիլոմետր արագություն մի ժամվա մեջ:

Ծանր հիվանդ ձիերին՝ 2 կիլոմետր արագությամբ մի ժամում, ըստ վորում գաղաքները կողմակերպվում են ավելի հաճախ, վորպեսզի ձիերը հնարավորություն ունենան լավ հանգրստանալու: Դադարքներում անհրաժեշտ է կերակրել և ջուր տալ:

Բացահանման համար հատկացվում են կարմիր բանակայիններ՝ յերեք հիվանդ ձիուն մեկը, իսկ վարակիչ հիվանդություն ունեցողներին՝ 1 — 2 ձիուն մի կարմիր բանակային, նայած հիվանդության բնույթին:

Առաջավոր անասնաբուժական կետի կամ անասնաբուժական հիվանդանոցի տարրերիչ նշան հանդիսանում է սպիտակ փոքրիկ դրոշակը՝ կապույտ խաչով, իսկ զիշերը՝ խաչանիշ լապտերը: Ճանապարհին հարկավոր է փնտռել նշիչներ (տախտակ սլաքով և կապույտ խաչով), վորոնք ցույց են տալիս անասնաբուժական հիվանդանոց տանող ճանապարհը: Նշիչները գուրս են հանվում ճանապարհների խաչմերուկների վրա և գյուղի մուտքի մոտ:

Ինչպես յերևում է գրքույկից, ձիու առողջության պահպանությունը զգալի չափով կախված է ձիու վրա աշխատող և նրան խնամող մարտիկից: Վորպեսզի մարտիկը կատարի իր մարտական խնդիրն ամեն բույե և ամեն պայմաններում, նրա ձին միշտ պետք է լինի առողջ, կայտառ, դիմացկուն և անխափան կատարի այս կամ այն աշխատանքը:

Դրա համար հարկավոր է.

— Կանոնավորապես և ժամանակին կերակրել և ջուր տալ ձիուն,

— կանոնավորապես ոգտագործել ձին աշխատանքի մեջ,

— մաքուր պահել ձիու մարմինը,

— մաքուր պահել ախոռը և ձիակապարանը և հսկել կարգ ու կանոնին նրանց մեջ,

— կերակրելու, ջուր տալու և մաքրելու համար, այլ և լրծելու և թամբելու դեպքում գործածել միայն խնամքի և ձիու հարգարանքի այն առարկաները (տոպրակները, խոզանակները, քերիչները, մահուղի կտորները, թամբերը, պախուրցներն ու լրծասարքը), վորոնք տեղարկված և ամրացված են ձիուն:

— հետևել ձիու հարգարանքի (թամբեր, լծասարք և այլն) կանոնավորությունը և ժամանակին ուղղել նկատված թերությունները,

— հետևել կանոնավոր պայտելուն և պայտի ու սեպերի ամբողջությունը (չի կտրվել արդյոք պայտը, չի լիկլիկում այն) և

— ձիու հիվանդանալու բոլոր նշանների դեպքում (ձին չի ուտում կերը, թուլացած է աշխատում, հագում է, նայում է փորին, դոփում է առջևի վոտով, ծանր է շնչում, կաղում է, քերել է մեղավը, ջարդել է վոտը և այլն) անպատճառ ղեկուցել իր հրամանատարին և դիմել անասնաբուժի ոգնությունը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ձիու նշանակութիւնը ժողովրդական տնտեսութեան և յերկրի պաշտպանութեան մեջ	69 3
2. Ինչպէս ե կաղմված ձիու որգանիղմը	4
3. Ջահել ձիու (նորոգընտիր) դաստիարակութիւնը	12
4. Ձիուն կեր տալու բնդհանուր կանոնները	13
5. Ջրարբի բնդհանուր կանոնները	19
6. Ինչպէս պետք ե մաքրել ձին	20
7. Ինչպէս պետք ե լողացնել և լվանալ ձին	27
8. Պայտելը և սմբակները խնամքը	27
9. Ձիերին ախոռում պահելու կանոնները	29
10. Ինչպէս պետք ե տեղարկել և պահպանել ձիու հար- դարանքը	32 39
11. Ինչպէս պահպանել ձիու ուժը արշավանքում	39
12. Ինչպէս պետք ե խնամել ձիուն յերկաթուղով, ջրային ճանապարհներով և ավտոմեքենաներով նրան փոխադրելիս	46
13. Ձիու վատ սովորութիւններն ու արատները և նրանց դեմ պայքարելու միջոցները	51
14. Ինչ հիվանդութիւններով ե հաճախ հիվանդանում ձին և ինչպէս պետք ե կանխել այդ հիվանդութիւնները	53
15. Ձիու պաշտպանութիւնը թունավորող նյութերից փասովելուց	67
16. Ընդհանուր գաղափար հիվանդ, վիրավորված և թունավորող նյութերով փասոված ձիերին բացահանման մասին	70

Պատ. խմբագիր, Ս. Մելիքսեթյան
 Լեզվական խմբագիր՝ Հ. Պետրոսյան
 Տեխ. խմբագիր Լ. Ոհանյան
 Սրբագրիչ՝ Վ. Ավագյան
 Գոնարող սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

Գլաղլիտի լիազոր՝ Ա. — 4004. Հրատ. № 4565
 Պատվեր 337. տիրած 4000.
 Թուղթ 62x94 Տպագր. 5 մամ.
 Մեկ մամ. 38400 նշան. Հեղինակ. 4, 25 մամ.
 Հանձնված ե արտադրութեան մարտի 27-ին 1938 թ.
 Ստորագրված ե արտադրութեան համար հունիսի 21-ին 1938 թ.



14 НОЯ. 1938

531

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.

11

28746

С. КРЕВЕР
УХОД ЗА КОНЕМ
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.